# ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԽԱՂ
# «ՍԻՆՈԼ»

Սիմուլյացիոն խաղը պատրաստվել է USAID – ի Քաղաքացիական
կրթության ծրագրի շրջանակներում

**Սիմուլյացիոն խաղը պատրաստվել է USAID – ի Քաղաքացիական կրթության ծրագրի շրջանակներում**

**Հեղինակներ՝**
Սոփո Բաչիլավա
Բակուր Խիջակաձե

**Աշխատանքային խմբի ղեկավար՝**
Մակա Բիբիլեիշվիլի

**Խմբագիր՝**
Ռիտա Բաինդուրաշվիլի

2023 թ.
Ռեսուրսը պատրաստվել է ամերիկացի ժողովրդի աջակցությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Տվյալ ռեսուրսում պարունակվող ինֆորմացիայի և նրանում արծարծվող տեսակետների միանձնյա պատասխանատուն ձեռնարկի հեղինակներն են: Ռեսուրսը չի ներկայացնում PH international-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

## ՆԱԽԱԲԱՆ

2022-2027 թվականներին PH international կազմակերպությունը Վրաստանում իրականացնելու է USAID-ի Քաղաքացիական կրթության ծրագիրը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (US-AID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է դաստիարակել քաղաքացիական գործընթացներ ներգրավվող բարձր գիտակցությամբ երիտասարդ քաղաքացիների: Ծրագիրը նախատեսում է տեխնոլոգիաներ ներդնել քաղաքացիական կրթության ուսանում-ուսուցման գործընթացում, ինչպես նաև նպաստել դպրոցում ժողովրդավարական մշակույթի ներկրմանն ու բիզնեսի և դպրոցների միջև կապի ստեղծմանը:

Այս նպատակի իրականացմանն են ծառայում ծրագրի շրջանակներում ընդգրկված միացյալ գործընկեր կազմակերպությունները, որոնք բաշխված գործառութային ծանրաբեռնվածությամբ գործում են Վրաստանի ողջ տարածքում:

Ծրագրի շրջանակներում Քաղաքացիական կրթության մանկավարժների ֆորումը նպաստում է դպրոցական ժողովրդավարության հզորացմանն ու քաղաքացիական կրթության որակյալ ուսուցմանը: Հենց այս նպատակով է կազմվել տվյալ ինտերակտիվ ուսումնական ռեսուրսը՝ «Սինոլ» սիմուլյացիոն խաղը: Սիմուլյացիան ուսուցման փորձնական ձևն է, որը ներառում է դեպի աշակերտը կողմնորոշված մոտեցումներ և կառուցողական մեթոդներ:

Մենք կարծում ենք, որ նման տիպի ռեսուրսները ուսումնական գործընթացը դարձնում են աշակերտակենտրոն և հետաքրքիր՝ հնարավորություն ընձեռելով գործնականում կիրառել տեսական գիտելիքները:

*Մաղթում ենք հաջողություններ*

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

- Ինչ է իրենից ներկայացնում սիմուլյացիոն խաղը

## ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԽԱՂ՝ «ՍԻՆՈԼ»

- Խաղի նպատակը
- Տեխնիկական բնութագրերը
- Դերերը և դրանց բաշխումը
- Խաղի տևողությունը
- Պահանջվող ռեսուրսներ
- Ուսանողների թղթապանակներ
- Տեխնիկական սարքավորումներ
- Տարածքների կահավորում
- Կանոններ

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված N1 - Պրոֆիլներ
- Հավելված N2 – Սցենար (տեղեկատվություն՝ երկրի մասին)
- Հավելված N3 - Պրոֆիլային քարտեզ
- Հավելված N4 - Կանոններ և ընթացակարգեր
- Հավելված N5 – Տեղեկատվություն՝ միջազգային կազմակերպությունների մասին
- Հավելված N6 – Պլեբիսցիտի (հանրաքվեի) անցկացման կարգը
- Հավելված N7 – Պլեբիսցիտի քվեաթերթիկ
- Հավելված N8 – Իմիտացված/Մոդելավորված սոցիալական ցանց
- Հավելված N9 – Կրծքանշաններ/Բեյջեր

# ԻՆՉ Է ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԽԱՂԸ

Սիմուլյացիոն խաղը կրթական ակտիվություն է, որը նմանակելով իրականությունը, թույլ է տալիս խաղի մասնակիցներին գործնականում կիրառել տեսական գիտելիքներն ու հմտությունները: Սիմուլյացիոն խաղն ունի կոնկրետ կրթական նպատակներ: Սիմուլյացիոն խաղում տրված են սցենար և հրահանգներ, որոնց միջոցով խաղացողը մտնում է նախապես սահմանված իրավիճակ, որն ինքնին իրականության կրկնօրինակումն է: Խաղի մասնակիցները փորձում են իրենց խաղի մեջ պատկերված իրականության մեջ և, ապա եզրակացություններ անում:

Սիմուլյացիան թույլ է տալիս գործել խաղացողներին՝ օգտագործելով քննադատական և վերլուծական մտածողությունը: Խաղի սցենարը, իբրև կանոն, նկատառում է խնդիրը տարբեր ճանապարհներով լուծելու հնարավորությունը, ինչը խաղացողների մոտ ստեղծում է իրականությունն առավել խորն ընկալելու զգացողությունն ու ապահովում ներգրավվածությունն այդ իրականութան մեջ:

Սիմուլյացիոն խաղն օգնում է աշակերտներին ըմբռնել կառավարմանը, քաղաքականությանը, շրջակա միջավայրի պահպանությանը, մշակութային բազմերանգությանն առնչվող ու սոցիալական նշանակության տարբեր թեմաներ ու խնդիրներ: Սիմուլյացիայի միջոցով կարելի է զարգացնել նաև այնպիսի հմտություններ, ինչպիսիք են տեխնոլոգիայի կիրառումը, բանավեճի արվեստը, հրապարակային ելույթը և այլն:

Սիմուլյացիոն խաղն իր բարդությամբ տարբերվում է ուսումնական այլ ակտիվություններից: Սիմուլյացիան պահանջում է համապատասխան նախապատրաստվածություն, ժամանակ և տարածություն, երբեմն էլ համապատասխան տեխնիկական սարքավորումներ (նոութբուք, ձայնի հզորացուցիչ, տեսախցիկ...):

Խաղի մասնակիցներին մեթոդն առաջարկում է սեփական կարծիքն արտահայտելու ազատություն, գործողությունների կարգ և պատասխանատվություն՝ հնարավոր բարդություններից խուսափելու և դրանք կառավարելու համար: Մասնակիցները պետք է ազատություն ունենան կառուցելու իրենց սեփական գիտելիքները՝ միջամտության, դիտարկման, ընդհանրացման և տարբեր տեսակետների դիտարկման միջոցով:

Ամփոփման կարգով նշենք, որ սիմուլյացիոն խաղի մասնակիցները փաստերն ու տեղեկությունները կարող են ստանալ խաղի և թեստավորման ճանապարհով: Ավելին, սիմուլյացիոն խաղը մեծացնում է քննադատական մտածողության ունակությունը:

## ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԽԱՂԻ ՏԱՐՐԵՐ

### ՍՑԵՆԱՐ

Սցենարը պատմություն է, որը ստեղծվել է ցանկալի ուսումնական նպատակին հասնելու համար: Այն նկարագրում է այն երկրի կամ տարածաշրջանի քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ կարևոր ասպեկտները, որտեղ տեղի է ունենում սիմուլյացիոն խաղը: Մասնակիցներին այն առաջարկում է բանավեճային հարցեր և թեմաներ, որոնք պետք է հաղթահարվեն խաղի ընթացքում:

a. Սիմուլյացիան պետք է մոտ լինի իրականությանը: Այն պետք է արտացոլի իրական իրավիճակն իրական տարածաշրջանում: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում (օրինակ՝ խիստ հակասական թեմաներով) գեղարվեստական կամ կիսաֆանտաստիկ սցենարը կարող է ավելի արդյունավետ լինել: Այս դեպքում սցենարը պետք է նկարագրի որևէ հորինված միջավայր, որը, սակայն իրական տարրեր է պարունակում, օրինակ՝ հորինված երկիր, որը ղեկավարվում է մեզ ծանոթ սոցիալ-տնտեսական գործոններով:

b. Մակարդակ, որտեղ զարգանում է սցենարը.
- - միջազգային մակարդակ
- - ազգային մակարդակ
- - տեղական մակարդակ

### ՄԻՋԱՎԱՅՐ

Որոշ սիմուլյացիաների համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ միջավայր, որի մասին հարկ է հոգ տանել նախքան խաղի մեկնարկը:

a. Մասնակիցներից յուրաքանչյուրին իրենց դերին ծանոթացնելու համար անհրաժեշտ է ստեղծել համարժեք միջավայր, որը պահանջվում է ըստ սցենարի: Օրինակ՝ Անվտանգության խորհրդում համաժողովի սիմուլյացիան պահանջում է անհրաժեշտ միջավայր՝ սեղանների հատուկ դասավորվածություն, սեղանին տեղադրված դրոշներ, ջուր և այլն:

b. Մի քանի սենյակ (որոշ ակտորներ կամ բոլոր խմբերը կարող են իրենց սեփական գրասենյակի կարիքն ունենալ):
Այս հանգամանքն ուշագրավ է և խրախուսելի, եթե սիմուլյացիոն խաղն ընդգրկում է մամուլի խումբ:

c. Բավականաչափ տարածք Յատկապես այն սիմուլյացիոն խաղերի ընթացքում, որոնք ենթադրում են բազմաթիվ ոչ պաշտոնական բանակցություններ, մասնակիցներին պետք է առաջարկենք բավականաչափ տարածք՝ մասնավոր և գաղտնի բանակցություններ վարելու համար:

Կանոնների և ընթացակարգերի փաստաթուղթը մասնակիցներին ներկայացնում է խաղի հիմնական ասպեկտները և ցույց տալիս, թե ինչպես վարել խաղն ու ինչպես շփվել միմյանց հետ: Այս փաստաթուղթը հիմնականում բաղկացած է հետևյալ ասպեկտներից.

a. Մասնակիցների հաղորդակցման եղանակ
b. Խաղի ժամանակացույց
c. Քվեարկության համակարգ
d. Եզրափակիչ համաժողով
e. Խաղի այլ հիմնական տարրեր (եթե այդպիսիք կան)

## ԴԵՐԱՅԻՆ ՊՐՈՖԻԼՆԵՐ

Խաղը սկսելու համար անհրաժեշտ է դերերը բաշխել մասնակիցների միջև: Այս նպատակին հասնելու տարբեր հնարավորություններ կան.

- Լոտո. կազմակերպիչը դերերը բաշխում է պատահականության սկզբունքով:
- Շահ. մասնակիցներն իրենք են ընտրում դերերը:
- Բաշխում. կազմակերպիչները դերեր են հատկացնում կոնկրետ մասնակիցների:
- Այլ ուղիներ:

**Դերի պրոֆիլը բաղկացած է հետևյալ տեղեկություններից.**

a. Անձնական փորձ + շահ և նպատակներ
b. Ակտորի պաշտոնը/գործառույթը
c. Փոխզիջման հնարավորություններ
d. Ընդհանուր նշումներ ռազմավարության վերաբերյալ
e. Տեղեկություններ՝ այլ ակտորների մասին (թույլատրումներ և շահեր)

## ԱԿՆԱՐԿ՝ ԱԿՏՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որպեսզի մասնակիցները պատկերացում կազմեն խաղի մյուս դերակատարների և կազմակերպությունների մասին, մենք բաժանում ենք նրանց ակնարկ՝ ակտորների մասին: Վերջինս փաստաթուղթ է, հիմնականում A4 ձևաչափի թղթին ամրագրված, որտեղ տարբեր գույներով գրված են հետևյալ տեղեկությունները.

a. անուն (օր.՝ Ջոն Սմիթ)
b. զբաղեցրած պաշտոնը (օր.՝ կուսակցության ղեկավար, գործադիր տնօրեն, նախագահ և այլն)

c. հաստատություն, կուսակցություն, ընկերություն և այլն, որոնց ներկայացուցիչն է տվյալ (օրինակ՝ Արտաքին գործերի նախարարություն, Ազգային դեմոկրատական կուսակցություն)
d. պրոֆիլի լուսանկար և հաստատության պատկերանշան/լոգո

Պրոֆիլները, որոնք ներկայացնում են գործունեության ընդհանուր բնագավառը, պետք է նույն գույնն ունենան և մոտ լինեն միմյանց՝ առավել ընկալելի լինելու համար: Այս մոտեցման շնորհիվ մասնակիցներն առավել հեշտությամբ կտարբերակեն կողմնակիցներին ու հակառակորդներին:

## ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԽԱՂԻ ՖԱՍԻԼԻՏԱՑԻԱ/ՎԱՐՈՒՄ

Կարևոր է, որ ցանկացած բովանդակություն չներկայացնեք կաղապարված ձևաչափի մեջ: Ավելին, մասնակիցները պետք է ազատ լինեն նոր գիտելիքների ձեռքբերման մեջ, որը հնարավոր կդառնա միջամտության, դիտարկման, արտացոլման և ընդհանրացման ճանապարհով: Այստեղ կարևոր է նաև իրականության/ավտենտորության ասպեկտը: Մասնակիցներին հետաքրքրելու և հուզական կապ ստեղծելու համար անհրաժեշտ է, որ սիմուլյացիոն խնդիրն արտացոլի իրականությունը և բխի հենց մասնակիցների իրականության զգացումից: Բացի այդ, սիմուլյացիոն խաղի խնդիրները պետք է դրսևորվեն տարբեր իրավիճակներում, որոնք իրենց հերթին կապահովեն տարբեր հեռանկարների առկայությունը: Այս ճանապարհը կանխում է գիտելիքների կաղապարված և անխախտ կիրառումը: Խաղացողները պետք է կարողանան իրենց գիտելիքները կիրառել տարբեր իրավիճակներում և տարբեր կերպով:

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԽԱՂԻ ՀԵՏ

Սիմուլյացիոն խաղը սկսելու համար անհրաժեշտ է, որպեսզի խաղացողները նախապես ծանոթ լինեն կանոնների և ընթացակարգերի մանրամասներին, ինչը թույլ կտա բոլոր մասնակիցներին լիարժեք հասկանալ իրենց առաջադրանքը խաղի ընթացքում: Իսկ առավելապես կարևորը՝ մասնակիցների դերակատարման գործընթացի դյուրացումն է, որի մի քանի ճանապարհի գոյություն ունի:

1. Գծի հատում. գիծը հատելուց հետո մասնակիցները դառնում են սիմուլյացիոն խաղի հերոսներ (ակտորներ): Նախքան գիծն անցնելը իրենց իսկական անունն են ասում, իսկ գիծը հատելուց հետո՝ «այժմ ես X երկրի նախագահն եմ (օրինակ)» արտահայտությունը:

2. Մասնակիցներին ներկայացնել այն ակտորի բնորոշիչ հատկությունները (պաշտոնը/գործառույթը), ում իրենք մարմնավորելու են, որպեսզի առավել հեշտությամբ յուրացնեն համապատասխանեն դերն ու այդով դյուրացնեն մյուս ակտորների իրենց ճանաչման գործընթացը՝ տեսանելի դաձնելով, թե շրջապատի մարդիկ ում հետ գործ ունեն և կամ ում հետ են խոսում:
3. Սիմուլյացիոն խաղի ժամանակացույցի ամրագրումը գրատախտակին:

Ներածական մասին հաջորդում է կանոններին և ընթացակարգերին ծանոթանալու գոործընթացը:

## ԽԱՂԸ և ՖԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ ՆՐԱՆՈՒՄ

Քանի որ սիմուլյացիոն խաղի հիմնական գաղափարը խաղալով սովորելն է, ֆասիլիտատորի հիմնական խնդիրն է ապահովել անհրաժեշտ շրջանակն ու համոզվել, որ յուրաքանչյուր մասնակից տիրապետում է իր ակտորի դերին և, հետևաբար խաղի մեջ ընդգրկվում:
Սիմուլյացիոն խաղի ընթացքում մասնակիցներից է կախված, թե ինչպիսի փորձ ձեռք կբերեն և ինչ նոր գիտելիքներ կհավաքեն: Ֆասիլիտատորը միջամտում է միայն այն ժամանակ, երբ առաջանում են լուրջ խնդիրներ: Նա կանգնեցնում է խաղն ու թույլ չի տալիս մասնակիցներին շարունակել այն: Ֆասիլիտատորը վերահսկում է ժամանակացույցը և հակիրճ հիշեցնում խաղացողներին նոր փուլի նպատակը: Եթե խաղն ունի մամուլի բաղադրիչ, ապա ֆասիլիտատորը պատասխանատու է լրատվական հաղորդման պատրաստման համար և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում լրագրողներին:
Ֆասիլիտատորը պետք է հնարավորինս քիչ միջամտի սիմուլյացիոն խաղին, միաժամանակ՝ վստահ լինի, որ ընթացքն ինչ-ինչ պատճառներով չի խախտվել: Այս պարագայում ֆասիլիտատորի միջամտությունը դառնում է անհրաժեշտ: Նման դեպքերը կարող են արձանագրվել, երբ, օրինակ՝ մասնակիցները չեն ընկալել խաղի կանոնները և կամ խաղացողը ստում է: Եթե ֆասիլիտատորը նկատում է, որ մասնակիցներից մեկը չի խաղում և մի կողմում նստած, ընդհանրապես ակտիվություն չի ցուցաբերում, ապա պետք է մոտենա նրան, փորձի պարզել պատճառն ու օգնի հասնել սահմանված նպատակին: Ֆասիլիտատորը պետք է հաջողեցնի վերադարձնել մասնակցին խաղի մեջ՝ ձեռնպահ մնալով հրահանգներից ու հարկադրանքներից՝ բացառապես խթանելով մասնակիցների դատողականությունն ու վերլուծական ունակությունը:

## ԽԱՂԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մասնակիցները քննարկում են դեբրիֆինգի/հարցադրումների ընթացքում խաղում կատարվածը, այն թե ինչո՞ւ է դա տեղի ունեցել և ի՞նչ եզրակացությունների կարելի է հանգել՝ իրական կյանքում համապատասխան վարքագիծ դրսևորելու համար:

Դեբրիֆինգի փուլը ենթադրում է խաղի փուլի ընթացքում ձեռք բերված փորձի վերանայում: Այս փուլը հաճախ անտեսվում է, այնուամենայնիվ, այն կարևոր է ընդհանուր ուսուցման արդյունքի համար, քանի որ մասնակիցները տարբեր փորձառնությունների միջով են անցնում և, հետևաբար, տարբեր եզրահանգումներ անում: Դեբրիֆինգի փուլի նպատակը ըմբռնածի ու եզրակացությունների արդյունավետ կիսումն է միմյանց միջև: Մասնակիցները կարող են անհատական ձեռքբերումներից ընդհանուր օգուտ քաղել:

Ինչպես նշվեց սկզբում, սիմուլյացիոն խաղը մեթոդ է և ոչ՝ ինքնանպատակ:

Ըստ սիմուլյացիոն խաղի ընթացքի և կատարված գործողությունների՝ եզրակացություն է արվում իրականության վերաբերյալ: Որպես կանոն, մասնակիցները շատ լավ հիշում են սիմուլյացիոն խաղի ընթացքում ստեղծված դրական և բացասական հուզական պահերը: Ռեֆլեքսիայի նպատակը հաջող կամ անհաջող օգտագործված ռազմավարությունների արդյունքում ձեռք բերված փորձն է: Ուսուցման վերջնական արդյունքի վրա հաճախ ազդում են անարդյունավետ կամ ձախողված ակտիվությունները, և գուցե նույնիսկ ավելին, քան ճիշտ ընտրված և պարզ ուղիները:

Դեբրիֆինգի փուլի կենտրոնական հարցն այն է, թե ի՞նչ են սովորել մասնակիցները, ո՞րն է գործնական նպատակը և ի՞նչ ազդեցություն կունենան դրանք իրական կյանքում: Որպես ֆասիլիտատոր՝ պատրաստ եղեք մասնակիցների հույզերին և անձնական կոնֆլիկտներին:

Ծրագրեք դեբրիֆինգն ըստ տրված կառուցվածքի և օգտագործեք հետևյալ ուղղորդող հարցերը.

a. Կրկնություն.
   - Ինչպե՞ս ընթացավ:
   - Ներգրավվա՞ծ էին, արդյոք, բոլորը:
   - Ո՞վ էր ղեկավարում գործընթացը/խումբը/օրակարգը:

b. Վերհիշել.
   - Դրական ընթացքը:
   - Բացասական ընթացքը:

c. Հույզեր.
   - Ի՞նչ հույզեր բացահայտվեցին խաղի ընթացքում և ի՞նչ ազդեցություն ունեցան դրանք խաղի ընթացքի վրա
   - Ի՞նչն էր նյարդայնացնում:

- Ի՞նչ էին մտածում միմյանց մասին տարբեր խմբեր:
- Ինչպե՞ս վարվեցիք սթրեսային իրավիճակի ժամանակ:
- Վիրավորե՞լ են, արդյոք, որևէ մեկին:

d. Ամփոփում.
- Ի՞նչ քաղեցինք խաղից:
- Ի՞նչ ազդեցություն ունի այն իրական կյանքի վրա:

e. Ընկալում.
- Ինչպե՞ս կվարվեիք նույն այդ օրինակով իրական կյանքում:
- Ո՞ր պահը բացարձակ այլ կերպ կկիրառեիք:

## ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԽԱՂ՝ «ՍԻՆՈԼ»

«Սինոլ» սիմուլյացիոն խաղը մասնակիցներին այնպիսի իրավիճակի առաջ է կանգնեցնում, որի պայմաններում նրանք գիտակցում են լրատվամիջոցների ազդեցության կարևորությունը հասարակական կարծիքի և դիրքորոշման վրա:

Խաղի բովանդակության մեջ արծարծվում է Սինոլ պետությունը, որը կանգնած է կարևոր որոշման առջև: Խոսքը ռազմավարական առումով իր համար ձեռնտու միջազգային կազմակերպությանն անդամագրվելու մասին է:

Ընտրության համար տրված է երկու միջազգային կազմակերպություն՝ **«Ուժեղ միություն»** և **«Մեծ դաշինք»**, որոնց ներկայացուցիչներն ու համախոհները փորձում են դրական վերաբերմունք ձեռք բերել բնակչության շրջանում՝ հանրաքվեի ցանկալի արդյունք ստանալու համար: Միջազգային կազմակերպությունների և ընթացիկ իրադարձությունների մասին բնակչությունը տեղեկատվություն է ստանում **լրատվամիջոցների միջոցով:** Ըստ այդմ՝ **հիմնական դերը խաղում է լրատվամիջոցը, սահմանելով, թե ո՞ր տեղեկատվությունն ի՞նչ տեսքով / ինչպիսի՞ ծավալով տրամադրի բնակչությանը, ո՞ւմ շահերն ավելի շատ պետք է ընդգծի / որքանո՞վ է օբյեկտիվ իր փոխանցած տեղեկատվությունը: Հենց լրատվամիջոցն է վճռորոշ դեր խաղալու հանրաքվեում արձանագրված հանրային դիրքորոշման մեջ (տես սցենարը):**

Խաղի ընթացքում աշակերտները պետք է խաղան քաղաքական գործիչների, գործարարների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, լրագրողների կամ այլ քաղաքացիների դերեր և խաղին ընթացք տալ՝ սեփական պրոֆիլների վրա հիմնվելով:

Խաղի ընթացքում լրագրողները պետք է ընթացիկ գործընթացների մասին սյուժեներ պատրաստեն, իսկ շահագրգիռ կողմերը փորձեն ազդել լրատվամիջոցների վրա՝ իրենց համար ձեռնտու հաղորդագրություններ հեռարձակելու համար: Բնակչությունը պետք է որոշում կայացնի հենց լրատվամիջոցներից ստացած տեղեկատվության հիման վրա: Խաղի ընթացակարգերի մասին տեղեկությունների համար տես **«Ընթացակարգեր / ծրագրված ակտիվություններ»** աղյուսակը:

## ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ.

Աշակերտները պետք է հասկանան հավասարակշռված և օբյեկտիվ տեղեկատվությանը տիրապետելու կարևորությունը, հասկանան լրատվամիջոցների դերը հասարակական կարծիքի ձևավորման մեջ, ինչպես նաև գիտակցեն լրատվամիջոցների վրա հնարավոր ազդեցությունները:

## ԽԱՂԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ.

- Աշակերտները պետք է հասկանան ԶԼՄ-ների ազդեցությունը հասարակական կարծիքի ձևավորման վրա:
- Աշակերտները պետք է հասկանան տեղեկատվության հետևում եղած հնարավոր ազդեցությունները:
- Աշակերտները պետք է հասկանան օբյեկտիվ տեղեկատվությանը տիրապետելու կարևորությունը:

## ԽԱՂԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ.

- Աշակերտները քննադատաբար են վերլուծում տեղեկատվությունը:
- Տեղեկատվությունը ստուգում են մի քանի աղբյուրների միջոցով:
- Առավել քիչ են ենթարկվում ազդեցությանը:

## «ՍԻՆՈԼ» ՍԻՄՈՒԼՅԱՑԻԱՆ և «ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ

Սիմուլյացիոն խաղը նման չէ ավանդական դասարանային գործընթացին: Այն կարող է իրականացվել նույնիսկ դասաժամերից հետո, օրինակ՝ ակումբային ձևաչափում և կամ՝ դպրոցից դուրս, ոչ դպրոցական միջավայրում: Այդուհանդերձ, այս կոնկրետ սիմուլյացիան այնպես է կազմված, որ համապատասխանի «Քաղաքացիություն» առարկայի նպատակային հասկացություններին և աստիճանական արդյունքներին: Խաղը ստեղծելիս հաշվի ենք առել նշված առարկայի համար ազգային ուսումնական պլանով սահմանված հեռահար նպատակները, դրանց հաշվառմամբ գրվել են խաղի սցենարը, ընթացակարգերը և խաղացողների դերերը: Համապատասխանաբար, խաղը ներառում է այնպիսի խնդիրներ և գործընթացներ, որոնց ուղղությամբ աշխատանքը կնպաստի աշակերտների մեջ թիրախային հասկացությունների և կայուն պատկերացումների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև այն հմտությունների զարգացմանը, որոնք անհրաժեշտ են առարկայական մակարդակի արդյունքին հասնելու համար:

Եկեք մանրամասն քննարկենք, թե ինչ կապ կա սիմուլյացիայի և Ազգային ուսումնական ծրագրի միջև:

## ՍԻՄՈՒԼՅԱՑԻԱ ; ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

**ԻՆՉՊԵՍ ԳԻՏԵՔ, ՄԻՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ «ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ» ՉԱՓՈՐՈՇՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ՉՈՐՍ ԻՆԴԵՔՍՆԵՐՈՎ.**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ**

1

Որոշումներ կայացնելիս և համապատասխան գործողություններ ձեռնարկելիս հաշվի առնել կարևորագույն իրավական փաստաթղթերը (այդ թվում՝ Վրաստանի Սահմանադրություն, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Երեխաների իրավունքների կոնվենցիա).

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ**

2

Տեղեկանալ հասարակության համար գլոբալ և տեղական սոցիալ-քաղաքական արդի խնդիրներին և հաշվի առնելով ժողովրդավարության սկզբունքները սեփական ներգրավվածությամբ հոգ տանել դրանց կարգավորման ուղղությամբ:

Քաղ.միջ.1

Քաղ.միջ.2

**ԱՇԱԿԵՐՏԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ.**

Քաղ.միջ.3

Քաղ.միջ.4

3

Գործել կայուն զարգացման սկզբունքներին համապատասխան (ներառյալ՝ առօրյա և արտակարգ իրավիճակներում անվտանգության կանոնների պահպանումը (բնական և տեխնածին պատճառներով):

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ**

4

Վարել հասարակության դրական փոփոխությունների վրա կենտրոնացած գաղափարների լոբբինգն ու փաստաբանությունը՝ տարբեր շահագրգիռ խմբերի և պետական կառույցների հետ համագործակցությամբ:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ**

Սիմուլյացիայի ողջ էությունն այն է, որ աշակերտները սիմուլյացիոն սյուժեի և գործընթացի օգնությամբ հասկանան իրական կյանքին առնչվող խնդիրները, որոնք արդիական են հասարակության համար և պահանջում են քաղաքացիների ներգրավվածություն: Խաղի ընթացքում նրանք պետք է տեսնեն և բացահայտեն հասարակության համար կարևոր խնդիրները/հարցերը և հոգ տանեն դրանց լուծման ուղղությամբ (Քաղ.միջ. 1,2), հաղթահարեն երկընտրանքներ, որոշումներ կայացնեն և տեսնեն դրանց արդյունքները երկարաժամկետ հեռանկարում (Քաղ.միջ.1,2,3): Այս գործընթացում նրանք միայնակ չեն և, հետևաբար, պետք է իրականացնեն իրենց կարծիքների լոբբինգը, համագործակցեն տարբեր խմբերի հետ և այլն (Քաղ.միջ.4):

## ՍԻՄՈՒԼՅԱՑԻԱ և ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեզ հայտնի է, որ առարկայական յուրաքանչյուր մակարդակի արդյունք համապատասխանում է նույն առարկայի երկարաժամկետ նպատակին, նույն՝ թիրախային հասկացությանը: Հենց այս հասկացությունների և կայուն պատկերացումների գիտակցման և կազմավորման արդյունքում, հնարավոր է հասնել քննարկված վերոնշյալ արդյունքների: Ինչպես գիտեք, «Քաղաքացիություն» առարկան ունի չորս թիրախային հասկացություն, դրանք են՝ հասարակություն, ժողովրդավարություն, քաղաքացիական մասնակցություն, կայուն զարգացում: Եկեք քննարկենք չորսից յուրաքանչյուրը, ինչպես նաև դրանց կապը սիմուլյացիայի հետ:

| ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՆՐԱ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ | ԽԱՂԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՈՒ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻՆ |
|---|---|
| **հասարակությունը**<br>• Մարդն անհատականություն է իր սեփական աշխարհայացքով (գաղափարներով, արժեքներով) և ձգտումներով. նա ունի սեփական եսի ազատ զարգացման իրավունք:<br>• Մարդն ունի տարբեր (ֆիզիոլոգիական, անվտանգության, սոցիալական շփումների և այլն) կարիքներ: Առանց վերջիններիս բավարարման մարդը չի կարող զարգանալ, առաջխաղացում ապրել:<br>• Այլ մարդկանց/սոցիալական խմբերի/հաստատությունների հետ հարաբերություններն օգնում են մարդուն անձնական զարգացում ապրել:<br>• Հաստատակամությունը (սեփական կարծիքը համարձակ արտահայտելու կարողություն՝ առանց վիրավորելու ուրիշներին) նպաստում է անհատի և հասարակության ներդաշնակ հարաբերություններին: | Յուրաքանչյուր մասնակից ունի տարբերվող դեր, որտեղ արտահայտվում են սիմուլյացիոն կերպարի անհատական հատկանիշները, գաղափարները, արժեքները և ձգտումները, որոնց հիման վրա խաղացողը պետք է որոշումներ կայացնի: Խաղի ընթացքում մասնակիցը համագործակցում է տարբեր մարդկանց, խմբերի կամ հաստատությունների հետ: Խաղի կանոնների համաձայն՝ խաղացողները պարտավոր են իրենց դիրքորոշումը վստահորեն արտահայտել: |

| ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՆՐԱ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ | ԽԱՂԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՈՒ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻՆ |
| --- | --- |
| **Ժողովրդավարություն**<br>• Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով:<br>• Մարդն ունի քաղաքացիական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կոլեկտիվ իրավունքներ. Վրաստանի Սահմանադրությունը և միջազգային փաստաթղթերը (իռչակագրեր, կոնվենցիաներ) ապահովում են այդ իրավունքների պաշտպանությունը:<br>• Ժողովրդավարական հասարակության/պետության մեջ մարդու իրավունքները ամենակարևոր արժեքն են:<br>• Ժողովրդավարությունը հիմնված է հիմնարար սկզբունքների վրա (հավասարություն, օրենքի գերակայություն, թափանցիկություն, իշխանությունների տարանջատում, արդար ընտրություններ, պատասխանատվություն, ներառականություն, ոչ բռնի գործողություններ, հանդուրժողականություն), առանց վերջիններիս պաշտպանության ժողովրդավարական պետությունը չի կարող գործել: | Խաղի գործընթացն իրականացվում է այնպես, որ յուրաքանչյուր մասնակից ակտիվ օգտվում է տարբեր իրավունքներից, հատկապես՝ քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունքից և խոսքի արտահայտման ազատությունից: Ըստ այդմ, նա հասկանում է նաև դրանց իմաստը: Խաղի բովանդակությամբ պայմանավորված, մասնակիցները տեսնում են պետության էությունը և նրա դերը բնակչության բարեկեցության ստեղծման գործում: Մասնակիցները տեսնում են նաև ժողովրդավարական սկզբունքների կարևորությունն ու անհրաժեշտությունը (հավասարություն, թափանցիկություն, պատասխանատվություն, ոչ բռնի մեթոդներով գործունեություն); ընկալում են մեդիայի, որպես այսպես կոչված, չորրորդ իշխանության կարևորությունը և գիտակցում, թե որքանով կարևոր է լրատվամիջոցների ազատությունը, անկախությունն ու անաչառությունը: |

| ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՆՐԱ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ | ԽԱՂԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՈՒ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻՆ |
|---|---|
| **Քաղաքացիական մասնակցություն**<br>• Ժողովրդավարական հասարակությունը քաղաքացիական հասարակություն է, որը բաղկացած է ակտիվ քաղաքացիներից:<br>• Քաղաքացիական մասնակցությունը հանրային կարիքների/երկրի մասին հոգալու միջոց է:<br>• Ակտիվ քաղաքացիները տարբեր ճանապարհներով հոգում են հանրային խնդիրների լուծման մասին (սոցիալական նախագծերի ծրագրում-իրականացում, կամավորական աշխատանք, փաստաբանություն, լոբբինգ): Այդ ընթացքում նրանք համագործակցում են միմյանց և հասարակական ինստիտուտների, հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների հետ:<br>• Քաղաքացիական մասնակցության ժամանակ կարևոր է հաշվի առնել այլ մարդկանց շահերը:<br>• Քաղաքացիական մասնակցությունը բացառում է բռնի գործողություններ: | Քաղաքացիական հասարակությունը և քաղաքացիական մասնակցությունը (քաղաքացի լրագրողներ, ակտիվիստներ, լրատվամիջոցներ, ավանդական և սոցիալական մեդիա հարթակներ և դրանց օգտագործումը տեղեկատվական արշավների համար) ակտիվ դեր են խաղում: Խաղի ընթացքում մասնակիցները պետք է համագործակցեն միմյանց հետ և արձանագրեն իրենց դիրքորոշումը ոչ բռնի ճանապարհներով: Ելնելով իր պրոֆիլից՝ յուրաքանչյուր մասնակից հասկանում է քաղաքական գործընթացներում քաղաքացիների ներգրավվածության կարևորությունը: |
| **Կայուն զարգացում**<br>• Ռեսուրսներ օգտագործելիս կարևոր է հաշվի առնել հասարակության շահերն ու ապագայի հեռանկարը:<br>• Տեղական գործողություններն ունեն գլոբալ հետևանքներ (օրինակ՝ շրջակա միջավայրի մասին հոգածությունը սկսվում է աննշան թվացող գործողություններից, օրինակ՝ աղբ չթափելուց, պոլիէթիլենային տոպրակներից բացառումից): | Կայուն զարգացման հասկացության խաղը ներառում է կոնկրետ որոշումների արդյունքների երկարաժամկետ հեռանկարի ընկալումը, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացի տեսնում է իր դերը հանրային գործընթացներում ու գիտակցում, որ յուրաքանչյուր անհատ կարող է նաև իր ներդրումն ունենալ երկրի ողջ տարածքում առկա կարևոր խնդիրների լուծման գործում: |

Որպեսզի «Սինոլի» սիմուլյացիոն խաղն արդյունավետ լինի, կարևոր է, որ աշակերտները նախնական գիտելիքներ ունենան ստորև նշված թեմաների վերաբերյալ, որոնց մշակման համար տրամադրվում են ռեսուրսներ:

**Թեմաներ ꝑ ռեսուրսներ սիմուլյացիոն խաղի նախապատրաստական փուլի համար**

**Ուղիղ ժողովրդավարություն** (ռեֆերենդում և պլեբիսցիտ)

- Ո՞նչ է ուղիղ ժողովրդավարությունը http://www.nplg.gov.ge/gwdict/index.php?a=term&d=5&t=14307
- Ի՞նչ է պլեբիսցիտը/հանրաքվեն/ և ինչպե՞ս է այն անցկացվում https://netgazeti.ge/news/408485/

**Միջազգային կազմակերպություններ** (դրանց դերը և նպատակները)

- Ինչո՞ւ են ստեղծվում միջազգային կազմակերպությունները: https://www.myadvokat.ge/ka/blog/8286/saertashoriso-organizaciebis-roli-msofli-oshi

**Լրատվամիջոցները որպես չորրորդ իշխանություն, ꝑ լրատվամիջոցները որպես քաղաքացիական հասարակություն** (ԶԼՄ-ի գործառույթներն ու ազդեցությունները)

- «Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների և լրատվամիջոցների հետ», քաղաքացիական կրթության աջակցության ձեռնարկ, էջ. 41-56 https://www.civics.ge/library-category/page/15
- ԶԼՄ-ների դերն ու գործառույթները http://millab.ge/ka/mil-resources/any/5/any/any/

**Նորություններ** (նպատակներ և ձևեր, փաստ և կարծիք)

- Տեղեկատվությունն ու նրա նշանակությունը http://millab.ge/ka/mil-resources/any/7/any/any/

Վերլուծություն և կարծիք tsereteli-analizisa-da-mosazrebis-tsera-reader.pdf

### Տեխնիկական բնութագրեր.

- դերերն ու դրանց բաշխումը
- մասնակիցների թիվը՝ 24
- մասնակիցների տարիքը՝ 13-17 տարեկան

Խաղը ներառում է 24 պրոֆիլ և պրոֆիլների քարտեզ, որտեղ բոլոր 24 դերերը կարող են դիտվել մեկ պատկերի մեջ (տես հավելված)։ Անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչը խաղի հենց ծրագրման փուլում նախապես ծանոթանա պրոֆիլների քարտեզին և խաղացողների պրոֆիլներին։ Աշակերտների թվով պայմանավորված (ոչ բավարար կամ ավելի շատ լինելու դեպքում), ուսուցիչն իրավասու է փոխել, հեռացնել կամ ավելացնել պրոֆիլներ՝ չխախտելով խաղի սկզբունքն ու բովանդակությունը։

### Պրոֆիլների քարտեզ
### (Տեղեկությունը նախատեսված է ուսուցիչի համար)։

Պրոֆիլների քարտեզը ցույց է տալիս բոլոր այն կերպարները, որոնք պետք է փորձեն մարմնավորել աշակերտները։

### Խաղացողի պրոֆիլներ

Պրոֆիլներն իրենք են տրամադրում մանրամասները՝ այն է խաղացողի կենսագրությունը, ժողովրդագրական բնորոշիչները, և ամենակարևորը, այն, թե ինչ ձգտում ու մղումներ ունի խաղացողը, որոնք են նրա արժեքները և ինչ քայլերի կարող է դիմել։ Հարկ է նշել, որ ելնելով սիմուլյացիայի բովանդակությունից, պրոֆիլները խաղացողներին չեն թելադրում ստույգ քայլեր, չեն սահմանափակում ազատությունը կամ ստեղծագործական մոտեցումը, այնուամենայնիվ՝ հուշում են, թե ինչպես զարգացնել սեփական դերը։ Կարևոր է, որ յուրաքանչյուր աշակերտ իմանա միայն իր սեփական պրոֆիլը և դրա հիման վրա մշակի խաղի մեջ իրեն դրսևորելու ռազմավարությունը։ Աշակերտները պետք է նախազգուշացվեն, որ հնարավոր է անձամբ համաձայն չլինեն իրենց մարմնավորած կերպարի նպատակների կամ գաղափարների հետ, սակայն անհրաժեշտ է, որպեսզի ռազմավարությունը սահմանեն հիմնվելով հենց պրոֆիլի և ոչ՝ անձնական տեսակետների վրա։

Ի տարբերություն աշակերտների, որպեսզի ուսուցիչը լիարժեք հասկանա խաղի կառուցվածքն ու էությունը, անհրաժեշտ է ծանոթանալ սիմուլյացիայի մեջ ընդգրկված բոլոր պրոֆիլներին և բոլոր դերերին։ Առավել նպատակահարմար է սիմուլյացիայի դերերը բաշխել պատահականության սկզբունքով, թեև հնարավոր է, որ պրոֆիլները բաժանելուց առաջ ուսուցիչը ծանոթանա վերջիններիս բովանդակությանը և դերերը բաշխի ըստ կոնկրետ հետաքրքրությունների,

հմտությունների և կարողությունների: Օրինակ՝ լրագրողի դերը պահանջում է ավելի շատ տեխնիկական հմտություններ (տեսանյութի ձայնագրում, ներբեռնում համակարգչում, շնորհանդեսի անցկացում և այլն): Քաղաքական գործիչների և կամ շահագրգիռ կողմերի (բիզնես, ոչ կառավարական և այլն) խնդիրն է համոզել հանրությանը սեփական ճշմարտության մեջ, ուստի այս դերը պահանջում է ավելի շատ հրապարակային խոսքի և արդյունավետ հաղորդակցման հմտություններ: Ինքնին պարզ է, որ ուսուցիչը միաժամանակ կարող է նաև աշակերտների մոտ այս հմտությունների զարգացնանը նպաստել նախապատրաստական աշխատանքների փուլում:

### Խաղի տևողությունը՝ 5 ժամ

- Նախապատրաստական աշխատանք՝ հարցի առավել մանրամասն և ընդգրկուն ուսումնասիրության համար՝ 1, 5 ժամ:
- Նախապատրաստական աշխատանք՝սիմուլյացիայի անցկացման համար՝ 30 րոպե:
- Սիմուլյացիա՝ 2 ժամ
- Գնահատում՝ 1 ժամ

### Անհրաժեշտ ռեսուրսներ

Խաղը գործարկելու համար պետք է ստեղծենք խաղացողների թղթապանակներ, ինչպես նաև նախապես պատրաստենք անհրաժեշտ տեխնիկական սարքավորումները կամ տարածքները: Խաղն ուղեկցվում է տպագիր նյութով, որը պետք է օգտագործվի խաղացողների թղթապանակների կամ տարբեր գործողություններ իրականացնելու համար (պլեբիսցիտ, սոցիալական մեդիա):

## Խաղացողի թղթապանակներ

Խաղի համար պատրաստում ենք 24 թղթապանակ: Փաթեթը պարունակում է բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, որոնք պետք է տեղադրվեն թղթապանակում: Ուսուցիչը ստեղծում է 3 տիպի թղթապանակ.

- **Թղթապանակ 1**
- **Թղթապանակ 2**
- **Թղթապանակ 3**

Թղթապանակները կազմելիս պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուրում տեղադրում ենք միայն մեկ խաղացողի պրոֆիլ **(Հավելված N1)**: Յուրաքանչյուր խաղացողի թղթապանակ պետք է ընդգրկի երկրի մասին տեղեկություններն **(Հավելված N2)** ու խաղի կանոնները **(Հավելված N4)**:

**Ուշադրություն դարձրեք, միջազգային կազմակերպությունների մասին տեղեկատվությունը չպետք է տեղադրվի միայն 1 տեսակի թղթապանակում.**

**Թղթապանակի տեսակ 1.**

**Պրոֆիլներ`** *վաճառական, տնային տնտեսուհի, ատամնաբույժ, տաքսու վարորդ, ուսուցիչ, պատմաբան, ուսանող:*

***Թղթապանակները պետք է պարունակեն.***

- Պրոֆիլ
- Տեղեկություն երկրի մասին
- Խաղի կանոններ
- Պրոֆիլի համապատասխան կրծքանշաններ

**Թղթապանակի տեսակ 2.**

**Պրոֆիլներ`** քաղաքական գործիչներ, միջազգային կազմակերպությունների, լրատվամիջոցների, բիզնեսի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

***Թղթապանակները պետք է պարունակեն.***

- Պրոֆիլ
- Տեղեկություն երկրի մասին
- Խաղի կանոններ
- Տեղեկատվություն միջազգային կազմակերպությունների մասին
- Պրոֆիլի համապատասխան կրծքանշաններ

**Թղթապանակի տեսակ 3.**

**Պրոֆիլներ**՝ նախագահ, քաղաքացի լրագրողներ:

***Թղթապանակները պետք է պարունակեն.***

- Պրոֆիլ
- Տեղեկություն երկրի մասին
- Կանոններ և ընթացակարգեր
- Խաղացողների քարտեզ
- Տեղեկատվություն միջազգային կազմակերպությունների մասին
- Պլեբիսցիտի անցկացման ընթացակարգեր
- Պրոֆիլի համապատասխան կրծքանշաններ

**Տեխնիկական հագեցվածություն**

- Խաղի ընթացքում երկու տարբեր հեռուստաընկերությունների լրագրողներն ու քաղաքացի լրագրողները միաժամանակ պատրաստում են տեսանյութեր: Համապատասխանաբար, անհրաժեշտ են տեխնիկական սարքավորումներ.
- - երկու նոութբուք,
- - 4 սմարթֆոն կամ տեսախցիկ (մեկական հեռուստաընկերությունների և մեկական՝ անկախ լրագրողների համար),
- - USB,
- - պլեբիսցիտ անցկացնելու տուփ:

### Տարածքների կահավորում

Խաղում նախատեսված համալիր ակտիվությունների պատճառով (բանակցություններ, սյուժեների պատրաստում, հեռուստահաղորդումներ և այլն), որոնցից մի քանիսն ընթանում են զուգահեռ ռեժիմով, անհրաժեշտ է նախապես կահավորել մի քանի համապատասխան տարածք: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հեռուստանյութերի համար նախատեսված տարածքին: Հարկ է նշել, որ երկու տարբեր հեռուստահաղորդումներ պետք է հեռարձակվեն միաժամանակ, և մասնակիցներն իրենք պետք է ընտրեն, թե ո՞րն են դիտելու և որքա՞ն ժամանակ: Ուստի մեզ անհրաժեշտ են երկու սենյակներ, որոնցում կտեղադրվի մեկ համակարգիչ կամ պրոյեկտոր: Բացի այդ, մենք պետք է տարածք պատրաստենք ասուլիսի, բանակցությունների, պլեբիսցիտի և անկախ լրագրողների տեսանյութերի համար, որտեղ ի տարբերություն հեռուստանյութերի համար կահավորվող տարածքի, պետք է ներկա լինեն բոլոր մասնակիցները միասին: Այս տարածքները կարելի է դասավորել մեկ մեծ սենյակի տարբեր անկյուններում:

**Պլեբիսցիտի անցկացման ընթացակարգերին ծանոթացեք Հավելված N 6-ում**

Պլեբիսցիտի քվեաթերթիկը տրված է **Հավելված N 7-ում:** Մանկավարժը պետք է նախօրոք տպագրի քվեաթերթիկներն ըստ խաղում ընդգրկված մասնակիցների թվի:

### Իմիտացված/Նմանակված սոցիալական ցանց

Ըստ վերոնշյալի, Սինոլ սիմուլյացիոն խաղի նպատակներից մեկն է լրատվամիջոցների դերի գիտակցումը: Հետևաբար, զարմանալի չէ, որ ավանդական լրատվամիջոցների կարևորությունից բացի, աշակերտները պետք է հաշվի առնեն նաև սոցիալական լրատվամիջոցների ազդեցությունը: Այդ նպատակով քաղաքացիների պրոֆիլների բաժնում նշվում է, որ խաղի ընթացքում նրանք իրենց կարծիքն են հայտնելու սոցիալական ցանցերում: Գրատախտակին կարող ենք խոշոր տառերով գրել՝ «Սոցիալական ցանց», իսկ գրատախտակի կողքին դրված սեղանին տեղադրել սոցցանցային իրավիճակն ընդօրինակելու անհրաժեշտ պարագաները՝ թղթիկներ (օրինակ՝ գրառման, մեկնաբանելու կամ արձագանքելու համար) և դրանք պարբերաբար փակցնել գրատախտակին (կպչուն թղթի կամ այլնի տեսքով): Այս թերթիկները ներկայացված են խաղին կից նմուշների տեսքով և հետևաբար ուսուցիչը պետք է դրանք բազմացնի անհրաժեշտ քանակությամբ **(Հավելված N8)**:

***Ծանոթագրություն.*** Խաղի ընթացքում զուգահեռ ընթանում են մի շարք գործողություններ, որոնք օգնում են ապահովել մասնակիցներից և ոչ մեկի պասիվ չմնալու գործոնը: Որպեսզի աշակերտներն իրենք կարողանան կառավարել գործընթացները, տեսանելի տեղում պետք է ցուցադրվի ընթացակարգերի ցանկը, գործողությունների հաջորդականությունը, զուգահեռ ընթացքը, տևողությունը և այլն: Այս տեղեկատվության հիման վրա աշակերտները պետք է պլանավորեն իրենց գործունեությունը, իսկ ուսուցիչը պետք է միջամտի միայն այն ժամանակ, երբ նկատի, որ աշակերտներն ընդհանրապես ուշադրություն չեն դարձնում ընթացակարգերին: Ստորև բերված աղյուսակում ծանոթացեք պլանավորված ակտիվությունների վերաբերյալ տեղեկատվությանը:

Միմյանց ճանաչելու համար կերպարներին օգնում են կրծքանշանները **(Հավելված N9)**, որոնք մասնակիցները կփակցնեն իրենց զգեստին:

### Գնահատում.

Մասնակիցներին նստեցնում ենք շրջանաձև և հղում նախապես կազմված մի քանի հարց: Պետք է փորձենք, որպեսզի մասնակիցներից ամեն մեկն արտահայտի իր կարծիքը և յուրաքանչյուր ռեֆլեքսիային հնարավորին չափ հավասար ժամանակ տրամադրվի (տես Ռեֆլեքսիայի հարցեր)

### ՀԱՐՑԵՐ ՌԵՖԼԵՔՍԻԱՅԻ ՀԱՄԱՐ.

#### *Զգացմունքներ.*

- Ինչ հույզեր ունեիք խաղի ընթացքում:
- Ինչ եք կարծում, ինչն է ազդել խաղի ընթացքի վրա:
- Խաղում եղե՞լ են նյարդայնացնող հանգամանքներ:
- Ինչ եք կարծում ինչ են մտածում խմբերը միմյանց աշխատանքի վերաբերյալ:
- Ինչ եք արել դժվար իրավիճակները հաղթահարելու համար:
- Արդյոք, հաղթահարեցի՞ք ձեր կերպարի առջև դրված նպատակը: Ինչն է ձեզ օգնել կամ խանգարել:
- Ըստ ձեզ, որքանո՞վ են ակնկալելի նման խոչընդոտները կամ նպաստող գործոններն իրական կյանքում:

#### *Ամփոփում.*

- Ինչ սովորեցինք այս խաղից:
- Որքանո՞վ էր սիմուլյացիայի ընթացքում արծարծվող իրավիճակը մոտ իրական կյանքին:
- Եթե լսեիք տեղեկատվության բոլոր աղբյուրները, կկայացնեի՞ք, արդյոք, նույն որոշումն անձամբ:
- Ինչո՞ւ և ինչպե՞ս ստանալ օբյեկտիվ տեղեկատվություն:

#### *Ընկալում.*

- Ինչ բացահայտեցիք ձեզ համար:
- Ինչը կանեիք նույն կերպ իրական կյանքում:
- Ինչը կանեիք այլ կերպ:
- Ինչպե՞ս պետք է վարվենք նմանատիպ իրավիճակներում:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ ԾՐԱԳՐՎԱԾ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՓՈՒԼ | ՆՊԱՏԱԿ | ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԳՈՐԾԸՆԹԱՑ | ԺԱՄԱՆԱԿ |
|---|---|---|---|---|
| I ՓՈՒԼ | **ԴԵՐԻ ՍՏԱՆՁՆՈՒՄ** | Ծանոթացում խաղի սյուժեին, օրակարգի կանոններին, սեփական դերի ստանձնում | Պրոֆիլների թղթապանակները և կրծքանշանները/ բեյջերը բաժանվում են աշակերտներին: Նրանց տրվում է 10 րոպե տեղեկություններին ծանոթանալու համար, որից հետո ստանձնում են կերպարի դերը: Դերը ստանձնելուց առաջ, նրանք ամրացնում են բեյջը, հատում հատակին գծված խորհրդանշական գիծը և բարձրաձայն հայտարարում իրենց կերպարի անունը: Գիծն անցնելուց հետո, աշակերտները վերածվում են սիմուլյացիայի կերպարների: | 20 րոպե |
| | | Խաղի մասնակիցների հետ ծանոթացման գործընթաց<br><br>Նախապատր-աստություն՝ հաջորդ քայլերի համար | Աշակերտներին տրվում է 10 րոպե, որպեսզի հնարավորինս բացահայտեն համախոհների և մտածեն գործողությունների հաջորդ ընթացքի մասին:<br><br>Ասուլիսի նախապատրաստում.<br><br>**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ուսուցիչը պետք է շեշտի աշակերտներին, որ իրենից հրահանգներ չակնկալեն: Աշակերտները գործում են այն ընթացակարգերի համաձայն, որոնք ուսուցիչը նախապես կփակցնի տեսանելի վայրում:** | 10 րոպե |

| ՓՈՒԼ | ՆՊԱՏԱԿ | ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԳՈՐԾԸՆԹԱՑ | ԺԱՄԱՆԱԿ |
| --- | --- | --- | --- | --- |
| II ՓՈՒԼ | Ինֆորմացիայի կուտակում/ բանակցություններ | Մամլո ասուլիս նախագահի ադմինիստրացիայում | Նախագահը բնակչությանը տեղեկացնում է միջազգային կազմակերպություններին անդամակցելու հնարավորության և կարևորության մասին, հայտարարում է պլեբիսցիտը: Նախագահի ասուլիսը ուղիղ եթերով հեռարձակվում է բոլոր հեռուստաալիքներով, գործընթացին հետևում են քաղաքացիները և շահագրգիռ կողմերը: Լրագրողները հնարավորություն ունեն մեկական հարց տալու: | 15 րոպե |
| | | Սյուժեի պատրաստման գործընթաց | Հեռուստատեսային լրագրողները պատրաստվում են սյուժե ստեղծել՝ հարցազրույցներ են գրում, նկարահանում, տեքստեր պատրաստում:<br>**Նկատառում. սյուժեների փոխարեն հնարավոր է պատրաստվեն թոք շոուներ:** | 30 րոպե (զուգահեռ ընթացակարգեր) |
| | | Աշխատանքային հանդիպումներ | Հանդիպումներ և հեռախոսազրույցներ են անցկացվում հեռուստաընկերությունների խմբագիրների և շահագրգիռ կողմերի միջև: | |
| | | Հասարակական կարծիքի օնլայն հետազոտություն | Քաղաքացի լրագրողները նմանակված/ իմիտացված սոցիալական ցանցում հարցում են անցկացնում՝ պարզելու հասարակական դիրքորոշումները միջազգային կազմակերպություններին անդամակցելու վերաբերյալ: | |
| III ՓՈՒԼ | Կարծիքի ֆիքսում, Նախապատրաստական աշխատանքներ | Հաղորդակցություն/ սոցիալական ցանցում տեղ գտած արձագանքներ | Քաղաքացիները և շահագրգիռ կողմերը, կապված ընթացիկ գործընթացների հետ, գրառումներով և մեկնաբանություններով մեկնաբանում են իրենց կարծիքները իմիտացված սոցիալական ցանցերում: | 30 րոպե (զուգահեռ ընթացակարգեր) |
| | | Հաղորդման վրա աշխատելու գործընթաց | Խմբագիրները հանդիպում են լրագրողների հետ, քննարկում սյուժեների ուրվագծերը, ձևակերպում հիմնական ուղերձներն ու պատրաստում ռեպորտաժ: | |
| | | | Անկախ լրագրողներն աշխատում են իրենց սեփական հոդվածների բովանդակության վրա: | |

| ՓՈՒԼ | ՆՊԱՏԱԿ | ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԳՈՐԾԸՆԹԱՑ | ԺԱՄԱՆԱԿ |
|---|---|---|---|---|
| IV ՓՈՒԼ | Ինֆորմացիայի ձեռքբերում լրատվամիջոցից | 2 հեռուստաընկերության սյուժե | Երկու տարբեր հեռուստաընկերությունների սյուժեներ (կամ թոք-շոուներ) հեռարձակվում են երկու տարբեր սենյակներում և քաղաքացիներն իրենք են ընտրում, թե որ հաղորդումը դիտեն: | 10 րոպե (զուգահեռ գործընթաց) |
| V ՓՈՒԼ | Որոշման կայացում | Պլեբիսցիտ | Պլեբիսցիտը կազմակերպում է Սինոփի նախագահը: Խաղացողները գրանցում են իրենց ձայները, հետևում ընթացքին: Նախագահի հետ միասին, արդյունքները հաշվում են քաղաքացիական ակտիվիստները/անկախ լրագրողները: | 15 րոպե |
| VI ՓՈՒԼ | Արդյունքների բացահայտում | Անկախ լրագրողների հաղորդում | Հաղորդման մեջ հրապարակվում են՝ հանրային տրամադրությունների նախնական հարցման արդյունքները, տարբեր հեռուստաընկերություններով հեռարձակվող սյուժեները և պլեբիսցիտի արդյունքները: Խաղի մյուս մասնակիցները հետևում են հեռարձակմանը: | 20 րոպե |
| VII ՓՈՒԼ | Դերից դուրս գալու գործընթաց | Խաղացողները դուրս են գալիս դերից և վերադառնում իրենց «ես»-ին | Խաղացողները դուրս են գալիս դերից, հեռացնում բեյջը և կրկին ցուցադրաբար հատում հատակին գծված խորհրդանշական գիծը: Այս անգամ՝ ի նշան իրենց վերադարձի, նախքան գիծը հատելը ասում են՝ «իմ անունն է»՝կերպարի անունը, իսկ գիծը հատելուց հետո՝ «իմ անունն է՝ սեփական անունը: | 10 րոպե |
| VIII ՓՈՒԼ | Ռեֆլեքսիա | Խաղացողներն ամփոփում են անցած խաղը և արձանագրում իրենց եզրակացությունները: | Ուսուցիչը հարցեր է հղում ռեֆլեքսիայի համար (տես հարցեր ռեֆլեքսիայի համար ) | 60 րոպե |

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

# ՊՐՈՖԻԼՆԵՐ

Պրոֆիլները պատրաստված են ըստ Canva-ի հանրային օգտագործման դիզայնի գործիքների՝
https://rb.gy/ya83z

# ԴՈՆԱ ՍՏՐՈՈՒԴ

«Իսկական» հեռուստաընկերության խմբագիր



**ՏԱՐԻՔ**

44 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2008 Միջազգային հարաբերություններ
2012 Մեդիամենեջմենտ

**ՓՈՐՁ**

«Միասին» կուսակցության երիտասարդական թևի ներկայացուցիչ՝ 2010-2012 թվականներ: «Իսկական» հեռուստաընկերության խմբագիր՝ 2021 թվականից առայսօր: «Իսկական» հեռուստաընկերության լրագրող՝ 2018-2021 թվականներ:

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Գրել գիրք մեդիամենեջմենտի մասին

## ՓՈՐՁ

Դեռ մանկուց երազում էիք դիվանագետ դառնալ: Նույնիսկ չորս տարի սովորեցիք, սակայն բացահայտեցիք, որ այս գործը ձեզ այդքան էլ հաճելի չէ: Ապա փորձեցիք ձեզ քաղաքական դաշտում: Դուք ընդդիմադիր կուսակցություններից մեկի երիտասարդական թևի ակտիվ անդամն էիք: Մասնակցեցիք ընտրություններին, բայց՝ պարտվեցիք: Եզրահանգեցիք, որ ձեր կուսակցությունը բավարար աջակցություն չուներ ԶԼՄ-ներում և այդ իսկ պատճառով պարտվեց ընտրություններում: Ձախողումից հետո, որոշեցիք ձեր բախտը փորձել լրագրության մեջ և այդպիսով ճանապարհ հարթել դեպի հանրություն: Հեռուստատեսությունում աշխատում եք վերջին մի քանի տարիներին՝ սկզբում որպես լրագրող, իսկ այժմ՝ խմբագիր:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեզ համար հաճելի անակնկալ էր խմբագրի պաշտոնում նշանակվելը: Դուք փորձում եք ձեր ալիքի մենեջերներին ապացուցել, որ նրանք ճիշտ որոշում են կայացրել և, որ դուք արժանի եք այդ պաշտոնին:

## ՆՊԱՏԱԿ

Հեռուստատեսությամբ հեռարձակվող բոլոր սյուժեները պետք է համապատասխանեն ալիքի խմբագրական քաղաքականությանը և հիմնադիրների տեսակետներին: Նպատակին հասնելու համար պատրաստ եք խիստ միջոցներ ձեռնարկել: Վերջերս նույնիսկ մեկ աշխատակցի ազատեցիք աշխատանքից, քանի որ վերջինս չէր ենթարկվում ձեր հրահանգներին:

Այժմ աշխատում եք երկրի՝ միջազգային կազմակերպությանն անդամակցելու հարցի շուրջ և մտադիր եք ռեպորտաժը պատրաստելիս հաշվի առնել հիմնադիրների դիրքորոշումը: Նրանք աջակցում են «Մեծ դաշինքին»: Դուք սեմինարներ եք անցկացնում շահագրգիռ կողմերի հետ առանց լրագրողների, իսկ հետո փորձում եք այնպես անել, որ լրագրողական արդյունքն արտացոլի այդ հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները:

## ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ալիքի սեփականատերը գոհ է իր հեռուստաընկերությամբ հեռարձակվող ռեպորտաժներով և դրանց արդյունքներով:

# ՆԵՅԼ ՏՐԱՆ

«Իսկական» հեռուստաընկերություն, լրագրող



**ՏԱՐԻՔ**

30 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2015
Ժուռնալիստիկա

**ՓՈՐՁ**

«Լուսին» հեռուստաընկերության ստաժոր՝ 2019-2020 թվականներ
«Իսկական» հեռուստաընկերության լրագրող՝ 2019-2020 թվականներ

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Յութուբերություն

## ՓՈՐՁ

Դուք մանկուց երազել եք լրագրության մասին: Չնայած ընտանիքի հակազդեցությանը, այնուամենայնիվ այս մասնագիտությունն եք ընտրել և շուտով սկսել աշխատել հեռուստատեսությունում: Առաջին հեռուստաընկերությունը, որտեղ անցել եք ստաժորություն, չէր համապատասխանում ձեր սկզբունքներին: Դուք զգում էիք, որ հաճախ պետք է ապացուցեք այն, ինչին իրականում դեմ եք, ուստի շուտով հեռացաք այդտեղից, քանի որ մնում եք հավատարիմ այն սկզբունքին, որ լրագրողը պետք է ինքնուրույն որոշի, թե ինչպես նյութ պատրաստել:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք լրագրող եք և փորձում եք այնպես անել, որ ձեր սյուժեները առավելագույնս արտացոլեն իրականությունը: Դուք հաճախակի բախումներ եք ունենում ձեր ալիքի խմբագրի հետ, քանի որ չեք սիրում հրահանգներ ստանալ, թե ինչպես կառուցել նյութի սյուժեն:

## ՆՊԱՏԱԿ

Պատրաստել օբյեկտիվ սյուժե Սինոյի՝ միջազգային կազմակերպությանն անդամակցելու վերաբերյալ:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

Ձեր ռեպորտաժները օբյեկտիվ են և անկողմնակալ:

# ԴՐՅՈՒ ՓԵՅԳ

«Իսկական» հեռուստաընկերության օպերատոր/
մոնտաժող



## ՏԱՐԻՔ

25 տարեկան

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Չամուսնացած

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2013 Տեսաօպերատոր
2017 Հեռուստառադիոժուռնալիստիկա

## ՓՈՐՁ

«Իսկական» հեռուստաընկերության ստաժոր՝ 2018-2020 թվականներ
«Իսկական» հեռուստաընկերության օպերատոր-մոնտաժող՝ 2020 թվականից առայսօր

## ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ

Սեփական բիզնեսի ստեղծում

### ՓՈՐՁ

Երբեք չեք երազել օպերատոր կամ մոնտաժող դառնալու մասին, այժմ էլ ցանկանում եք սեփական բիզնեսն ունենալ, բայց քանի որ դեռ պարտքեր ունեք, չեք կարող հրաժարվել ձեր աշխատանքից: Աշխատավարձի պատճառով պետք է շարունակեք աշխատել հեռուստաընկերությունում:

### ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք հոգնել եք ձեր աշխատանքից և դժվարությամբ եք աշխատում, քանի որ հաճախ եք լսում խմբագրի ու լրագրողի ընդհարումները ու նաև հակասող հրահանգները, թե ում ցուցումներն օգտագործեք սյուժեն մոնտաժելիս: Վերջերս, մեկ մոնտաժողի արդեն ազատել են աշխատանքից, քանի որ չի ենթարկվել խմբագրի ցուցումներին: Չնայած նրա, որ հաճախ համաձայն չեք խմբագրի դիրքորոշմանը, դուք ստիպված եք պահպանել ձեր աշխատանքը, քանի դեռ չեք վճարել ձեր պարտքերը: Այնպես որ, աշխատեք հնարավորինս հստակ կատարել աշխատանքն ու չբարկացնել խմբագրին:

### ՆՊԱՏԱԿ

Արժանանալ խմբագրի գոհունակությանն ու պահպանել աշխատանքը:

### ՉԱՓՈՐՈՇԻՉ

Աշխատանքը պահպանված է:

# ԴԵՎԻԴ ԲՈՐԱՆ

«Լուսին» հեռուստաընկերության խմբագիր



**ՏԱՐԻՔ**

50 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2008 Հոգեբանություն

2010 Մեդիամենեջմենտ

**ՓՈՐՁ**

Հոգեբանական ծառայության կենտրոնի հոգեբան՝ 2008-2012 թվականներ

«Իսկական» հեռուստաընկերության լրագրող՝ 2012-2020 թվականներ

«Լուսին» հեռուստաընկերության խմբագիր՝ 2020 թվականից առայսօր

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Ապրում է ներկայով

## ՓՈՐՁ

Հաղորդակցվելու և մարդկանց վրա ներազդելու ունակությամբ դուք աչքի եք ընկնում մանկուց, ինչն էլ ազդել է ձեր մասնագիտական ընտրության վրա: Հոգեբան եք: Դուք տարիներ շարունակ աշխատել եք որպես հոգեբան, հաջողակ մասնագետ էիք, բայց մի օր, ձեր մանկության ընկերը՝ գործարար, ով պատրաստվում էր հեռուստաընկերություն հիմնել, զանգահարեց ձեզ հետ և խնդրեց գալ ու աշխատել իր հետ: Երկար ժամանակ նա հավաստիացնում էր ձեզ՝ առաջարկելով մեծ վարձատրություն և լավագույն պայմաններ: Ի վերջո, համաձայնեցիք, քանի որ բարձր աշխատավարձից բացի, կիսում էիք նաև հեռուստաընկերության հիմնադրի քաղաքականությունն ու սկզբունքները: Մտածեցիք, որ նոր կարգավիճակում ավելի հեշտ կազդեք հասարակության վրա: Առ այս պահն աշխատում եք հեռուստաընկերությունում և գոհ եք ձեր աշխատանքով:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այժմ հեռուստաընկերության խմբագիր եք և փորձում եք այնպես անել, որ ձեր հեռուստահաղորդումը հստակ արտացոլի այն արժեքները, որոնք բերել են ձեզ այս աշխատանք: Դուք կարծում եք, որ Սինոլը պետք է սերտ կապեր ունենա հարևան երկրների հետ, ուստի կողմ եք նրա՝ «Ուժեղ միությանը» միանալուն: Առանց լրագրողների, աշխատանքային հանդիպումներ եք անցկացնում շահագրգիռ կողմերի հետ, ապա փորձում այնպես անել, որ լրագրողական արտադրանքն արտացոլի այդ հանդիպումներում ձեռք բերված պայմանավորվածությունները:

## ՆՊԱՏԱԿ

Համոզել հանրությանն աջակցել «Ուժեղ միությանը» միանալուն:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

Պլեբիսցիտում գրանցված արդյունքների համաձայն, երկիրն ընտրում է «Ուժեղ միությունը»:

# ՄԱՐԻԱՆՆԱ ԱՆԴԵՐՍՈՆ

«Լուսին» հեռուստաընկերության լրագրող/
հեռուստամեկնաբան



**ՏԱՐԻՔ**

33 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2008 Թատերական
2014 Ժուռնալիստիկա

**ՓՈՐՁ**

«Հայացք» հեռուստաընկերության լրագրող՝ 2014-2026 թվականներ
«Լուսին» հեռուստաընկերության հաղորդավար՝ 2016 թվականից առայսօր

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Ցանկանում է ունենալ սեփական հեղինակային հաղորդում

**ՓՈՐՁ**

Փոքրուց երազում էիք դերասանության մասին: Դերասանական դասընթացներն ավարտելուց հետո, մի քանի ֆիլմերում էպիզոդիկ դերեր մարմնավորեցիք: Ձեզ գերեց տեսախցիկների առջև աշխատանքն ու որոշեցիք ձեր բախտը փորձել հեռուստատեսությունում: Այժմ հայտնի լրագրող և հեռուստահաղորդավարուհի եք: Սյուժեների թեմաների ընտրությամբ առանձնապես չեք զբաղվում, պարզապես կատարում եք խմբագրի կողմից ձեզ տրվող առաջադրանքներն ու դրանով բավարարվում՝ դուք էլ, նա էլ:

**ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Չնայած նրա, որ այժմ լրատվականի լրագրող եք և քաղաքականության մասին սյուժեներ եք պատրաստում, քաղաքականությամբ այդքան էլ չեք հետաքրքրվում: Դուք ցանկանում եք ունենալ նորաձևության մասին ձեր սեփական օրիգինալ շոուն, որի համար խմբագրի և հեռուստաընկերության սեփականատիրոջ բարի կամքն է հարկավոր: Ուստի կարևոր է հստակ հետևել նրանց հրահանգներին:

**ՆՊԱՏԱԿ**

Արժանանալ խմբագրի հավանությանն ու ստանալ առաջխաղացման հնարավորություն: Դուք այժմ աշխատում եք սյուժեի վրա, որը պետք է արտահայտի Սինոլի՝ միջազգային կազմակերպություններին անդամակցելու հնարավորությունները:

**ՁԱՓՈՐՈՇԻՉ**

Խմբագիրը գոհ է

# ԼԱՐՍ ՊԵՏԵՐՍ

«Լուսին» հեռուստաընկերության օպերատոր/ մոնտաժող



**ՏԱՐԻՔ**

23 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2015 տեսաօպերատոր
2017 Հեռուստառադիոժուռնալիստիկա

**ՓՈՐՁ**

«Լուսին» հեռուստաընկերության ստաժոր՝ 2018-2020 թվականներ
«Լուսին» հեռուստաընկերության օպերատոր-մոնտաժող՝ 2020 թվականից առայսօր

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Գեղարվեստական ֆիլմի նկարահանում

**ՓՈՐՁ**

Դուք հանրությանը հայտնի ընտանիքից եք: Ձեր նախապապը երկրի ազատագրական շարժման անդամներից էր և մեծ ներդրում է ունեցել Սիևոյի անկախացման հարցում: Ձեր մայրը տարիներ շարունակ ղեկավար պաշտոններ է զբաղեցրել և նրա նախաձեռնությամբ բազմաթիվ բարեփոխումներ են իրականացվել: Հենց այդ բարեփոխումների շնորհիվ հնարավոր է դարձել, որ երկիրը միանա «Մեծ դաշինքին»: Դուք շատ հպարտ եք ձեր ընտանիքով ու նրանց վաստակով և ծրագրում եք ֆիմ նկարահանել նրանց մասին: Անձամբ նույնպես կարծում եք, որ «Մեծ դաշինքին» միանալն անհրաժեշտ է երկրի զարգացման և գոյատևման համար: Բայց աշխատավայրում այլ կերպ են մտածում, այդ իսկ պատճառով աստիճանաբար առավել է դժվարանում այդտեղ աշխատելը:

**ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Որպես հեռուստատեսային լրատվականի օպերատոր և մոնտաժող՝ մշտապես գտնվում եք քաղաքական իրադարձությունների էպիկենտրոնում: Ձեզ այդ հանգամանքը շատ է հրապուրում, քանի որ ցանկանում եք, որ հասարակությունն իրազեկվի ընթացիկ իրադարձությունների մասին:

**ՆՊԱՏԱԿ**

Նպաստել հանրությանն օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրելու մեջ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ**

Սյուժեն, որի ստեղծման մասնակիցն եք, օբյեկտիվ է:

# ՀԵՐՄԱՆԱ ՆԱՊՈԼԻՏԱՆԻ

Քաղաքացի լրագրող



**ՏԱՐԻՔ**

24 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2018 Իրավաբանական
2020 Սոցիոլոգիա

**ՓՈՐՁ**

«Մտածիր» սոցիալական մեդիայի հարթակի հիմնադիր, քաղաքացի լրագրող՝ 2019 թվականից առայսօր:
Քաղաքացիական կրթության ակումբի առաջնորդ՝ 2018:

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Ուսման շարունակություն

## ՓՈՐՁ

Ուսանողական տարիներից սկսած մասնակցում եք քաղաքացիական գործընթացներին, նախաձեռնող խմբի անդամ եք, որի գլխավոր նպատակը հասարակության շրջանում քննադատական մտածողության բարձրացումն է և օբյեկտիվ տեղեկատվության փոխանցումը: Այդ նպատակով ձեր ընկերների հետ ստեղծել եք «Մտածիր» սոցիալական մեդիա հարթակը, որի միջոցով տարածում եք օբյեկտիվ և հավասարակշռված տեղեկատվություն: Այս վերջին շրջանում նկատելի է դարձել ձեր կայքերով հետաքրքրության աճը:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես քաղաքացի լրագրող՝ դուք ցանկանում եք ուսումնասիրել միջազգային կազմակերպությանն անդամակցելու հանրության նախնական վերաբերմունքը, ինչպես նաև դիտարկել լրատվամիջոցներում տարածվող տեղեկատվությունն այս խնդրի ու նրա ազդեցության վերաբերյալ: Ձեր նպատակն է պատրաստել հաղորդում, որտեղ հանրությանը կներկայացնեք, թե որքան կարևոր է տեղեկության քննադատական վերլուծությունը, ինչպես նաև մասնակցությունը պլեբիսցիտի անցկացմանն ու պլեբիսցիտի արդյունքների մասին հանրության իրազեկումը: Դուք օգնում եք նախագահին անցկացնել պլեբիսցիտը, հետևել գործընթացին և հաշվել ձայները:

## ՆՊԱՏԱԿ

Ձեր կողմից պատրաստված հաղորդման մեջ ներկայացնեք ձեր ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև օրինակներ բերեք տարբեր լրատվամիջոցների սյուժեներից և հասարակությանը տեղեկացնեք պլեբիսցիտի արդյունքների մասին:

## ՁԱՓՈՐՈՇԻՉ

Պատրաստվել է հաղորդում, որտեղ երևում են՝ 1. Հասարակության կանխակալ վերաբերմունքը, 2. Լրատվամիջոցների ազդեցությունը, 3. Պլեբիսցիտի արդյունքները:

# ԱԱՐՈՆ ԼՈԵՆ
Քաղաքացի լրագրող



**ՏԱՐԻՔ**
24 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**
Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**
2017
Սոցիալական աշխատանք

**ՓՈՐՁ**
«Մտածիր» սոցիալական մեդիա հարթակի հիմնադիր, քաղաքացի լրագրող 2019 թվականից առայսօր:
Ուսանողական ինքնակառավարում՝ 2015:

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**
Ծրագրավորման ուսանում

## ՓՈՐՁ
Ուսանողական տարիներից սկսած մասնակցում եք քաղաքացիական գործընթացներին, նախաձեռնող խմբի անդամ եք, որի գլխավոր նպատակը հասարակության շրջանում քննադատական մտածողության բարձրացումն է և օբյեկտիվ տեղեկատվության փոխանցումը: Այդ նպատակով ձեր ընկերների հետ ստեղծել եք «Մտածիր» սոցիալական մեդիա հարթակը, որի միջոցով տարածում եք օբյեկտիվ և հավասարակշռված տեղեկատվություն: Այս վերջին շրջանում նկատելի է դարձել ձեր կայքերով հետաքրքրության աճը:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Դուք և ձեր գործընկերը որոշել եք հարցում անցկացնել պարզելու համար հասարակության կանխակալ վերաբերմունքը միջազգային կազմակերպություններին անդամակցելու վերաբերյալ: Ապա  նախատեսում եք վերահսկել լրատվամիջոցների լուսաբանումները, որպեսզի տեսնեք, թե ինչպես են հանրային վերաբերմունքի վրա ազդում պլեբիսցիտի արդյունքները: Դուք օգնում եք նախագահին անցկացնել պլեբիսցիտ, հետևել գործընթացին և հաշվել ձայները:

## ՆՊԱՏԱԿ
Ձեր պատրաստած հաղորդման մեջ ներկայացնել հետազոտության արդյունքները, ինչպես նաև օրինակներ բերել տարբեր լրատվամիջոցների սյուժեներից և հանրությանը ներկայացնել պլեբիսցիտի արդյունքները:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ
Պատրաստվել է ծրագիր, որտեղ երևում են՝ 1. Հասարակության նախնական տրամադրությունները. 2. Լրատվամիջոցների ազդեցությունը. 3. Պլեբիսցիտի արդյունքները:

# ՍԻԱ ՌՈԴՐԻԳՈՒ

«Մեծ դաշինքի» ներկայացուցիչ



**ՏԱՐԻՔ**

55 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

1995
Միջազգային հարաբերություններ

**ՓՈՐՁ**

«Մեծ դաշինքի» ներկայացուցիչ Սինոլում

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Ինքնակենսագրական գիրք գրել

## ՓՈՐՁ

Որպես «Մեծ դաշինքի» ներկայացուցիչ, Սինոլ եք ժամանել 3 տարի առաջ, և այդ օրվանից ակտիվ համագործակցում եք քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների հետ: Նպատակ ունեք բարձրացնել կազմակերպության մասին իրազեկվածությունը և, որ ամենակարևորն է՝ վաստակել հանրության բարի կամքը կազմակերպության նկատմամբ: Ճիշտ է, Սինոլը զարգացող ժողովրդավարական երկիր է, բայց այն արդեն իսկ կարևոր քայլեր է ձեռնարկել երկրի ժողովրդավարականացման ճանապարհին, հետևաբար, վաստակել է իր արժանի թեկնածությունը «Մեծ դաշինքին» անդամակցելու համար: Ցավոք, հասարակության մի մասը չի պաշտպանում այս գաղափարը, քանի որ դաշինքին անդամակցելը երկրից պահանջում է լրացուցիչ բարեփոխումներ իրականացնել:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես դաշինքի ներկայացուցիչ, ձեր շահերից է բխում համոզել հանրությանն աջակցել «Մեծ դաշինքին» միանալուն: Սա առավել կամրապնդի ժողովրդավարական աշխարհը: Բնականաբար այս իրադարձությամբ մեծ հաջողություն կգրանցեք նաև դուք՝ որպես դիվանագետ, դարձնելով այս դրվագը ձեր իքնակենսագրական գրքի բացառիկ էջը: Նպատակին հասնելու համար դուք ակտիվ համագործակցում եք շահագրգիռ կողմերի, կառավարության և լրատվամիջոցների հետ: Հատուկ ուշադրություն եք դարձնում լրատվամիջոցների հետ աշխատանքային հանդիպումներին, ընդ որում և՛ լրագրողների, և՛ խմբագիրների հետ, որպեսզի վերջիններս ճիշտ լուսաբանեն «Մեծ դաշինքի» վերաբերյալ տեղեկատվությունը:

## ՆՊԱՏԱԿ

Համոզել հանրությանը և կառավարությանը աջակցել «Մեծ դաշինքին» միանալուն:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

Պլեբիսցիտի ժամանակ հանրությունն աջակցում է «Մեծ դաշինքին»:

# ԴԵՆԻ ՄԱՐՏԻՆԵՋ

«Ուժեղ միության» ներկայացուցիչ



**ՏԱՐԻՔ**

45 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2010 Բիզնես վարչարարություն

**ՓՈՐՁ**

Սինոլում «Ուժեղ միության» ներկայացուցիչ

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

«Ուժեղ միության» կազմում առաջատար դիրքի զբաղեցում

## ՓՈՐՁ

Ծնվել եք Սինոլում, ուսանողությունն բիզնես վարչարարության գծով «Ուժեղ միության» անդամ երկրների բուհերում եք կատարելագործել: 30 տարեկանից աշխատել եք «Ուժեղ միության» կառույցներում և բազմաթիվ կարևոր որոշումների մասնակիցը դարձել:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս պահին «Ուժեղ միության» ներկայացուցիչն եք Սինոլում: Այն պարագայում, եթե Սինոլն ընտրի «Ուժեղ միության» անդամությունը, ձեզ կգնահատեն՝ առաջադրելով առավել բարձր պաշտոնում: Այնուամենայնիվ, նաև գիտակցում եք, որ «Մեծ դաշինքն» իրական մրցակից է և ցանկալի արդյունքին հասնելու համար, պետք է շատ լուրջ աշխատեք Սինոլի համայնքի հետ: Դուք պետք է Սինոլի քաղաքացիներին համոզեք, որ «Ուժեղ միության» անդամ դառնալուց հետո, ընդհանուր իրավիճակը կբարելավվի՝ կնվազեն ապրանքների գները և երկիրը դուռ կբացի դեպի աշխարհի ամենամեծ շուկաներից մեկը, ինչը որոշիչ գործոն կդառնա Սինոլի տնտեսության վերածննդի համար: Մյուս կողմից, հանրությանը պետք է համոզեք, որ «Մեծ դաշինքին» միանալու համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները կարող են հակասել Սինոլի ավանդույթներին և ազգային արժեքներին: Դուք շահարկելու եք նաև այն փաստը, որ «Մեծ դաշինքը» պահանջում է զարգացնել դեմոկրատական ինստիտուտները, ինչը տևական ժամանակ կպահանջի՝ շարունակելով պահել Սինոլը երկարաժամկետ տնտեսական խնդիրների առաջ, իսկ «Ուժեղ միությունն» արդեն պատրաստ է Սինոլը՝ որպես լիիրավ անդամ ընդունելու: Դուք պետք է համոզեք հանրությանը, որ այն մտավախությունը, իբր միությունը ցանկանում է վերահսկել Սինոլի նավահանգիստը, անհիմն է: Քանի որ այն ներդրումները, որոնք կատարվելու են Սինոլի նավահանգստում և ռազմավարական այլ օբյեկտներում, նույնքան Սինոլի շահերից են բխում, որքան այս նավահանգստի օգտագործումը «Ուժեղ միության» անդամների համար: Դուք պետք է փորձեք այս տեղեկատվությունը հավասարապես հասցնել ինչպես Սինոլի պաշտոնյաներին, այնպես էլ՝ սովորական քաղաքացիներին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնեք ԶԼՄ-ների հետ համագործակցությանը և հանդիպումներ անցկացնեք տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, քանի որ հենց վերջիններս կարող են ազդել հասարակական կարծիքի ձևավորման վրա:

## ՆՊԱՏԱԿ

Սինոլի համայնքին և կառավարությանը համոզել աջակցել «Ուժեղ միությանն» անդամությանը:

## ԶԱՓՈՐՈՇԻՉ

Պլեբիսցիտում հանրությունը կողմ է «Ուժեղ միությանը» միանալուն:

# ՍԱՇԱ ԴՈՒԲՈՅՍ

«Միասին» ընդդիմադիր կուսակցության անդամ



**ՏԱՐԻՔ**

33 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2017 Քաղաքագիտություն
2013 Միջազգային հարաբերություններ

**ՓՈՐՁ**

«Միասին» ընդդիմադիր կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ՝ 2017 թվականից առայսօր: «Միասին» ընդդիմադիր կուսակցության երիտասարդական թևի ներկայացուցիչ՝ 2010-2012 թվականներ:

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Ցանկանում է նախագահ ընտրվել

## ՓՈՐՁ

Ժողովուրդը համար քաղաքական ակտիվ դեմք եք: Երկրի ծառայության մեջ մի շարք կարևոր ձեռքբերումների համամասնակից եք, այդ իսկ պատճառով կարծում եք, որ հարմար թեկնածու եք երկրի նախագահի պաշտոնը զբաղեցնելու համար:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետք է ակտիվ ներգրավված լինեք պլանավորված պլեբիսցիտի հետ կապված իրադարձություններին: Դուք քաջ գիտակցում եք, որ կառավարությունը շահագրգռված է երկրի տնտեսական վիճակը հնարավորինս արագ բարելավելու հարցում և այդ նպատակով կօգտագործի ցանկացած լծակ: Այս տեսանկյունից դուք վտանգ եք տեսնում երկրի՝ «Ուժեղ միությանն» անդամագրվելու մեջ, քանի որ տվյալ դեպքում հնարավոր է ձեր երկիրն իր վերահսկողությունը կորցնի ռազմավարական օբյեկտների նկատմամբ: Դուք կարծում եք, որ երկրի գլխավոր առաջնահերթությունը ժողովրդավարական կուրսի պահպանումն է, ուստի «Մեծ դաշինքին» անդամակցությունն՝ անհրաժեշտ: Լրատվամիջոցների և հասարակության հետ առնչվելիս ստիպված կլինեք բացահայտել իշխանությանը՝ երկրի շահերին հակառակ «Ուժեղ միության» հետ գործարքներ կնքելու և ժողովրդավարական ուղղվածությունից շեղվելու փորձի մեջ:
Պետք է փորձեք ընդդիմադիր լրատվամիջոցների խմբագիրների հետ պատրաստել այնպիսի հնչեղ սյուժեներ, որոնք հանրությանը հստակ ցույց կտան ռազմավարական օբյեկտների և Սինոփի նավահանգստի վերաբերյալ «Ուժեղ միության» շահերը և այն, թե ինչպես են փորձում այդ միության կողմնակիցները վարկաբեկել «Մեծ դաշինքը»՝ իբր սինոլցիներին իրենց ավանդույթներից հրաժարվել ստիպելու և սեփական գաղափարախոսությանը ենթարկեցնելու մեջ: Մեղադրանք, որը չի համապատասխանում իրականությանը:

## ՆՊԱՏԱԿ

Հանրությանը տեղեկատվություն տրամադրեք ընդդիմադիր ալիքների միջոցով և համոզեք «Մեծ դաշինքն» ընտրելու անհրաժեշտության մեջ:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

Հանրաքվեի ժամանակ հանրությունն աջակցում է «Մեծ դաշինքին» անդամակցությանը:

# ՉԻԴԻ ԷՉԻ

Բիզնես ընկերության սեփականատեր



**ՏԱՐԻՔ**

30 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2017 Բիզնեսվարչարարություն

2013 Քաղաքագիտություն

**ՓՈՐՁ**

2010 թվականից վարում է սեփական հաջողված բիզնես ընկերությունը: Վերջին երեք տարիներին՝ նախագահի քաղաքական խորհրդականն է էկոնոմիկայի հարցերով:

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Սեփական բիզնեսի մեկնարկում

**ՓՈՐՁ**

Բիզնես գործունեությամբ եք զբաղվում 18 տարեկանից: Համագործակցել ու ղեկավարել եք մի շարք հաջողակ ընկերություններ: Երիտասարդ տարիքում վաստակել եք բիզնես ոլորտի հարգանքն ու զբաղեցրել նախագահի խորհրդականի պաշտոնը:

**ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կարծում եք, որ Սինոլի բիզնես հատվածի համար պահը շրջադարձային է: «Ուժեղ միության» հեռանկարն ու հնարավորությունները շատ բարենպաստ դերակատարում են ունենալու Սինոլի տնտեսության համար և բիզնեսը տասնապատիկ աճ է գրանցելու, սակայն այդ ազդեցությունը կարող է ժամանակավոր լինել: Երկրի ռազմավարական օբյեկտների վրա վերահսկողությունը և այս միության հիերարխիկ բնորոշիչները բիզնեսի համար կայուն միջավայր չեն ստեղծի, քանի որ «Ուժեղ միությունը» ցանկացած պահի կարող է Սինոլի դեմ չհիմնավորված սահմանափակումներ կիրառել, որի փորձն արդեն ունեն անդամ այլ երկրները: Իսկ «Մեծ դաշինք» մուտքը, բազմաթիվ մարտահրավերներով հանդերձ, երկարաժամկետ արդյունքների հեռանկար ունի, ինչը կայունության երաշխիք է, հետևաբար նախապայման՝ երկրի կայուն զարգացման և վստահելի գործընկերներ ձեռք բերելու համար: Այս հանգամանքն արդարացնում է շահարկվող ռիսկի գործոնը: Որպես նախագահի խորհրդական, դուք պետք է համոզեք նրան աջակցել «Մեծ դաշինքին» անդամակցելու գաղափարին:

**ՆՊԱՏԱԿ**

Նախագահն ու հասարակությունը պետք է համոզվեն «Մեծ դաշինքին» միանալու գաղափարի ճշմարտացիության մեջ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ**

Հանրաքվեի ժամանակ հանրությունը կաջակցի «Մեծ դաշինքին» միանալու գաղափարին:

# ՌԵՅՁ ՄԻԼԵՐ

Բիզնեսմեն



**ՏԱՐԻՔ**

39 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

 Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

1999-2011

Սինոլի առաջին գիմնազիա

**ՓՈՐՁ**

20 տարեկանից մի շարք հաջողված բիզնեսների սեփականատեր՝ «Ուժեղ միության» երկրներում

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Միջազգային շուկայում բիզնեսի ընդլայնում

**ՓՈՐՁ**

20 տարեկանում հիմնել եք ձեր առաջին ընկերությունը՝ բջջային հեռախոսների խանութների ցանցը: Այդ օրերից ի վեր ձեր բիզնես գործունեությունն անխափան առաջ է ընթանում: «Ուժեղ միության» յուրաքանչյուր երկրում տարբեր բիզնես կենտրոններ և գործընկերներ ունեք, միլիոնավոր լարի եք ծախսել Սինոլում տարբեր ներդրումներ կատարելու համար: Արդյունքում, հաստատուն դիրք եք գրավել Սինոլի հասարակության շրջանում:

**ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Որպես երկրի խոշորագույն բիզնեսներից մեկի սեփականատեր, դուք մեծ դեր կխաղաք հասարակական կարծիքի ձևավորման գործում: Եթե Սինոլը դառնա «Ուժեղ դաշինքի» անդամ, ձեր ազդեցությունն ու կապիտալը զգալիորեն կմեծանան: Իսկ, եթե երկիրը «Մեծ դաշինք» անդամագրվի, ապա ձեր բիզնես շահերը կարող են վնասվել: Հետևաբար, ձեր նպատակն է համոզել հանրության առավելագույն հատվածին, որ ձեր դիրքորոշումն ամենաճիշտն ու ռացիոնալն է և, որ այդ դիրքորոշումը՝ «Ուժեղ միությանն» անդամակցությունն է: Անհրաժեշտ է համոզել լրատվամիջոցներին, որպեսզի վերջիններս հանրությանն այնպիսի տեղեկատվություն տրամադրեն, որն ակնհայտ կդարձնի «Ուժեղ դաշինքի» անդամակցության առավելությունները՝ միաժամանակ կբացահայտի «Մեծ դաշինքին» անդամակցության բացասական կողմերը: Օգտագործեք համոզելու ձեր հմտությունները՝ լրատվամիջոցների խմբագիրների հետ հանդիպումների ժամանակ:

**ՆՊԱՏԱԿ**

Համոզել հանրությանը, կառավարությանն ու լրատվամիջոցներին աջակցել «Ուժեղ միությանը» միանալուն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ**

Պլեբիսցիտում բնակչության աջակցություն՝ «Ուժեղ միությանը»:

# ՎԱՐԿԱ ԴԱՐԻԱ

«Յանուն ժողովրդավարության» NGO
Ներկայացուցիչ



**ՏԱՐԻՔ**

35 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2017
Սինոյի համալսարանի իրավագիտության ֆակուլտետ

**ՓՈՐՁ**

Իրավապաշտպան/ «Յանուն ժողովրդավարության» NGO նախագահ

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Նախագահի դիրքի պահպանում

## ՓՈՐՁ

Երկար ժամանակ աշխատում եք իրավական դաշտում, որպես իրավապաշտպան: Ստանձնել եք բազմաթիվ աղմկահարույց գործեր, որի շնորհիվ հանրությունը ձեզ լավ է ճանաչում: Այժմ ղեկավարում եք «Յանուն ժողովրդավարության»՝ Սինոյի ամենամեծ հասարակական կազմակերպությունը: Կազմակերպության նպատակն է պաշտպանել մարդու իրավունքներն ու վերահսկել կառավարությանը՝ ժողովրդավարական գործընթացներում:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես հասարակական կազմակերպության առաջնորդ, մոտիվացված եք դիտարկել պլեբիսցիտի հետ կապված Սինոյում տեղի ունեցող իրադարձությունները: Դուք հստակ գիտակցում եք «Մեծ դաշինքին» անդամակցության կարևորությունը՝ երկրի ժողովրդավարական զարգացման տեսանկյունից: Միժամանակ հասկանում եք «Ուժեղ միության» վտանգները: Ուստի պետք է համոզեք հանրությանը, որ ժողովրդավարական ուղին այլընտրանք չունի և «Մեծ դաշինքը» դրա հիմնական երաշխիքն է, իսկ «Ուժեղ միությունը» կոռուպցիայի, անօրինական ազդեցությունների աղբյուր է և Սինոյի շահերին հակառակ արժեքների կրող, ինչը վնասաբեր է երկրի համար: Դուք հարկադրված եք օգտագործել ձեր կապերը լրատվամիջոցների հետ համագործակցելիս, որպեսզի համոզեք նրանց եթեր չարձակել «Ուժեղ միության» օգտին հայտարարություններն ու հիմնական շեշտը դնել «Մեծ դաշինքի» օգտին հնչող հայտարարություններին:

## ՆՊԱՏԱԿ

Յամոզել հանրությանն աջակցել «Մեծ դաշինքին» միավորմանը, լրատվամիջոցներին համոզելով եթեր չտրամադրել «Ուժեղ միության» կողմնակիցներին:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

Պլեբիսցիտին բնակչության աջակցությունը «Մեծ դաշինքին»:

# ԴԱՆԱ ՎԵՐԴՈՒՍԿԻ

«Պաշտպանենք այն, ինչ մերն է» NGO
ներկայացուցիչ



**ՏԱՐԻՔ**

39 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2001
Տնտեսագետ

**ՓՈՐՁ**

«Պաշտպանենք այն, ինչ մերն է» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Կուսակցության հիմնում

## ՓՈՐՁ

Ուսանողական տարիների հետո տարբեր ակտիվությունների մասնակից եք: Երկար ժամանակ աշխատում եք հասարակական կազմակերպությունում՝ այժմ արդեն որպես տնօրեն: Ձեր աշխատանքի նպատակը միշտ եղել և մնում է երկրի ավանդույթների պաշտպանությունը, արժեքներին և սկզբունքներին հավատարմությունը: Ժամանակին Սինոլի խորհրդարանը հենց ձեր առաջարկի հիման վրա ընդունեց «Օտարերկրացիներին հողերի օտարման սահմանափակումների մասին» օրենքը: Հասարակությունը ձեզ ճանաչում է որպես ավանդույթների պաշտպան և հայրենասեր անհատականություն:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք՝ որպես հայրենասեր, ավանդապաշտ և ամենաակտիվ հասարակական կազմակերպություններից մեկի ներկայացուցիչ, պետք է ակտիվ դերակատարություն ունենաք պլեբիսցիտի վերաբերյալ հասարակական կարծիք ձևավորելու գործում: Քանի որ «Մեծ դաշինքը» լիբերալ գաղափարախոսության կրող է, դուք վտանգ եք տեսնում, որ Սինոլի նկատմամբ նրա պահանջները կխաթարեն երկրի ավանդական արժեքներն ու երկիրը ստիպված կլինի ընդունել օրենքներ, որոնք չեն համապատասխանում իր հիմնական արժեքներին: Կարծում եք, որ «Ուժեղ միությունը» չի խաթարի Սինոլի ավանդույթները, չի պարտադրի օրենսդրական փոփոխությունների պահանջներ, իսկ դրանից բխող տնտեսական աճի հնարավորությունները կուժեղացնեն երկիրը: Հայրենասիրական նկրտումներից ելնելով, դուք պատրաստ եք ամենուր և հատկապես լրատվական դաշտում, կանխել «Մեծ դաշինքին» անդամակցելու գաղափարի տարածումը:

## ՆՊԱՏԱԿ

Պաշտպանել ազգային ավանդույթներն ու արժեքները:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

Պլեբիսցիտին հանրությունը կաջակցի «Ուժեղ միությանն» անդամակցությանը:

# ՇԵՐՈՆ ԳԱՐՍԻԱ

Էկոնոմիկայի նախարար



**ՏԱՐԻՔ**

35 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2007

Հարվարդ, տնտեսագիտության դպրոց

**ՓՈՐՁ**

Սինողի ֆինանսների փոխնախարար

Սինողի Էկոնոմիկայի փոխնախարար

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Ցանկանում է վարչապետ դառնալ

## ՓՈՐՁ

Դուք հաջողությամբ ավարտել եք Հարվարդի տնտեսագիտության դպրոցը, որին հաջորդել է Սինողի կառավարությունում բարձր պաշտոններում աշխատանքը: Դուք հանդիսացել եք ֆինանսների, այնուհետև՝ էկոնոմիկայի փոխնախարար: Այժմ էկոնոմիկայի նախարար եք, հիանալի ծանոթ եք երկրի տնտեսական բաղադրիչներին ու ներկա իրավիճակին: Քանի որ Հարվարդի շրջանավարտ եք, հասարակությունը հատկապես ձեզնից է ակնկալում այն բարեփոխումները, որոնք տանում են դեպի երկրի տնտեսության առաջընթաց և գործազրկության խնդրի լուծում:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես երկրի էկոնոմիկայի նախարար՝ փորձում եք օգտագործել բոլոր լծակները տնտեսական վիճակը բարելավելու նպատակով: Որպես «Ուժեղ միության» ներկայացուցիչ ստացել եք ոչ պաշտոնական երաշխիք, որ անդամ դառնալուց հետո, Սինողին մի քանի միլիարդ ներդրումներ է ստանալու, որոնք տնտեսական տեսանկյունից լուծելու են երկրի առջեւ ծառացած բոլոր խնդիրները: Դուք նաև տեղյակ եք «Մեծ դաշինքի» անդամ լինելու, կայուն զարգացման և տնտեսական աճի հետևանքների մասին, սակայն երաշխիք չունեք, որ ձեր նախարար լինելու ընթացքում երկիրը կդառնա այդ դաշինքի անդամ: Ուստի ձեր նպատակն է հանրությանը և իշխանություններին համոզել «Ուժեղ միությանը» անդամակցության կարևորության մեջ: Այդ նպատակով ԶԼՄ-ներում և հասարակայնության հետ առնչվելիս, ստիպված եք լինելու հաճախ կրկնել այն միլիարդավոր ներդրումների մասին, որոնք երկիր կբերի «Ուժեղ միությանն» անդամակցությունը:

## ՆՊԱՏԱԿ

Երկրի տնտեսական աճ և գործազրկության խնդրի լուծում:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

Պլեբիսցիտին հանրային աջակցությունը՝ «Ուժեղ միությանն» անդամակցությանը:

# ԿԵՏՈՒՏ ՍՈՒԽՍՈՒԼԻՌ

Նախագահ



**ՏԱՐԻՔ**

50 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2010 Քաղաքական գիտությունների դոկտոր
1990 Միջազգային հարաբերություններ

**ՓՈՐՁ**

2010 Սինոլի վարչապետ
1990 Սինոլի արդարադատության նախարար

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Նախագահ ընտրվել երկրորդ ժամկետով

## ՓՈՐՁ

Դեռ ուսանողական տարիներից ակտիվ մասնակցում եք քաղաքական կյանքին: Դուք Սինոլի արդարադատության նախարարն էիք, ապա՝ վարչապետը, ի վերջո ժողովուրդը ձեզ ընտրեց երկրի նախագահ: Հասարակության զգալի հատվածը վստահում է ձեզ և պատրաստ է կիսել ձեր կարծիքը՝ տարբեր հարցերի շուրջ:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես նախագահ առաջին անգամ պետք է նշանակեք պլեբիսցիտ: Պլեբիսցիտին նախորդող ասուլիսում պետք է տեղեկացնեք հանրությանը, որ վերջնական որոշում կայացնելիս կառավարությունը պատրաստակամ է հաշվի առնել հասարակության դիրքորոշումը: Անձամբ ձեզ համար պլեբիսցիտի արդյունքը երկու դեպքում էլ ընդունելի կլինի, քանի որ երկու միությունների ներկայացուցիչներին էլ լավ եք ճանաչում և նրանց հետ համագործակցության փորձ ունեք: Սակայն դուք գիտակցում եք, որ ձեր հայտարարած դիրքորոշումը մեծ ազդեցություն կունենա հասարակության զգալի հատվածի վրա:

Նախքան որոշման կայացումը, թե որ միությանն եք սատարելու, պետք է լավ մտածեք: Լսեք ավագանու անդամներին և համայնքի տարբեր ներկայացուցիչներին ու ձեր տեսակետները հայտնի դարձնեք լրատվամիջոցներին: Նախընտրելի է լրատվամիջոցների հետ նախապես համաձայնեցնել զրույցի թեման և նույնիսկ այն հարցերը, որոնց դուք կպատասխանեք: Պետք է նաև նկատի ունենաք, որ ձեր ինչեցրած դիրքորոշումը համապատասխանելու է հանրության մեծամասնության շահերին՝ նախագահի պաշտոնում երկրորդ ժամկետում աջակցություն ապահովելու համար:

## ՆՊԱՏԱԿ

Նախագահական ընտրություններին հանրային աջակցության պահպանում:

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

Ձեր հայտարարած դիրքորոշումը համընկավ պլեբիսցիտում արձանագրված դիրքորոշման հետ:

# ԷԴՄՈՆԴ ԴԵՅԼ

Ուսանող



**ՏԱՐԻՔ**

21 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2020

Երկրաբանության ուսանող

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Սովորել արտերկրում՝ փոխանակման ծրագրով

## ՓՈՐՁ

Դուք ակտիվ քաղաքացի եք: Դպրոցական տարիներից ներգրավված եք համայնքային տարբեր ծրագրերի իրականացման մեջ: Ճիշտ է, այժմ չեք կարող շատ ժամանակ տրամադրել քաղաքացիական ակտիվությանը, այնուամենայնիվ, անընդհատ տեղեկանում եք նորություններին և փորձում իրազեկ լինել երկրում ընթացող գործընթացների մասին:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք երկրի առաջատար բուհերից մեկի 4-րդ կուրսի ուսանող եք: Ուսումնասիրում եք երկրաբանության ոլորտը: Չնայած շատ եք սիրում այս բնագավառը, սակայն Սինոլում տվյալ մասնագիտությամբ աշխատանքի տեղավորվելու հավանականությունը ցածր եք համարում: Ուստի չեք բացառում արտագնա աշխատանքի մեկնումը: Վերջերս կողմ եք արտահայտվում միջազգային կազմակերպության մեջ Սինոլի միավորման հեռանկարի քննարկումներին, այն նախապայմանով, որ երկիրը կարողանա հաստատվել միջազգային ասպարեզում և զարգանալ ժողովրդավարության ճանապարհով: Դուք կարծում եք, որ սա շատ հնարավորություններ կստեղծի երիտասարդների, այդ թվում՝ ձեզ համար: Այդ իսկ պատճառով ակտիվ հետևում եք ընթացիկ գործընթացներին և անընդհատ թարմացնում ձեր տեսակետները սոցիալական ցանցի միջոցով:

## ՆՊԱՏԱԿ

Որպես քաղաքացի՝ ակտիվ ներգրավվել եք երկրում ընթացող գործընթացներին: Երկիրը պետք է ընտրի այն ուղին, որը զարգացման հնարավորություն կտա: Իսկ այդ նպատակով դուք պատրաստ եք ցույց կազմակերպել՝ ձեր համախոհների հետ:

# ԱՆԺԵԼ ԴՈՆԻ

Պատմաբան



**ՏԱՐԻՔ**

35 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2013

Պատմաբան

**ՓՈՐՁ**

Պատմության դասագրքերի հեղինակ

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Պատմության հարցերի վերաբերյալ ամսագրի հրատարակում

## ՓՈՐՁ

Ձեր ընտանիքի նախնիները ակտիվ մասնակցել են Սինոյի անկախության ձեռքբերման գործընթացին: Դուք հպարտանում եք ձեր ընտանեկան պատմություններով: Ցանկանում եք ձեր նախնիների նման նպաստել երկրի հզորացմանն ու զարգացմանը: Պատմաբանությունն ընտրել եք որպես մասնագիտություն՝ ելնելով ձեր երկրի հանդեպ սիրուց: Ցանկանում եք ավելին իմանալ ձեր երկրի անցյալի մասին, որպեսզի առավել հասկանաք ապագայի նրա տեսլականը: Որպես պատմաբան ծանոթ եք Սինոյի և նրա հարևան երկրների պատմությանը, լավ եք տիրապետում հատկապես համաշխարհային պատմությունը:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք ձեր երկրի երկրպագուն եք և ցանկանում եք, որ Սինոյը լինի անկախ և հաջողակ պետություն, որը կպահպանի իր մշակույթն ու ավանդույթները և միևնույն ժամանակ կդառնա միջազգային աշխարհի անդամ: Շարունակվող բանավեճը, թե որ կազմակերպությանը պետք է միանա Սինոյը, շատ հետաքրքիր է ձեզ համար: Դուք տարբեր լրատվամիջոցներով ակտիվ հետևում եք ընթացիկ գործընթացներին և մշտապես թարմացնում ձեր դիրքերը սոցիալական ցանցում:

## ՆՊԱՏԱԿ

Հասարակությանը տեղեկություններ տրամադրել՝ տվյալ գործընթացները պատմական և ոչ միայն ներկա մարտահրավերների տեսանկյունից քննարկելու համար:

# ՔԵՅԹ ՎԵՆՍԴԵՅ

Ուսուցչուհի



**ՏԱՐԻՔ**

30 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2017

Օտար լեզուների ինստիտուտ

**ՓՈՐՁ**

Թարգմանիչ՝ 2015-2017 թվականներ

Սինոլի թիվ 2 հանրային դպրոց՝ 2018 թվականից առայսօր

## ՓՈՐՁ

Դուք մի քանի տարի աշխատել եք որպես թարգմանիչ, սակայն եկամուտն անկայուն էր և ամուսնանալուց հետո որոշեցիք փոխել աշխատանքը: Այժմ օտար լեզուների ուսուցչուհի եք, ամուսնացած եք, ունեք երկու երեխա: Ամուսինն արդեն երկու տարի աշխատում է արտերկրում:

Դուք երբեք չեք երազել ուսուցիչ դառնալու մասին: Ժամանակավոր սկսել եք աշխատել դպրոցում՝ միայն կայուն աշխատավարձի պատճառով, բայց կարճաժամկետ աշխատանքը մշտական է դարձել: Այժմ դուք ընտելացել եք այդ մասնագիտությանն ու կարծում եք, որ այն ձեզ մոտ լավ է ստացվում:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք հանրակրթական դպրոցի ուսուցչուհի եք, աշխատավարձը ոչ այդքան բարձր է, հետևաբար դժվարանում եք երկրում տիրող զնաճին համընթաց ձեր ընտանիքի կարիքները հոգալ: Մասնավոր աշակերտներ ունեք, ինչը փոքր ինչ օգնում է կենսական հարցերը լուծելիս: Այդուհանդերձ, կարծում եք, որ անհրաժեշտ է շտկել երկրի տնտեսական վիճակը, այլապես կաճի արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Դուք մտածում եք ձեր ամուսնու մոտ տեղափոխվելու մասին, սակայն դժվարանում եք թողնել երեխաներին: Վերջին շրջանում երկրի՝ միջազգային կազմակերպությանն անդամակցելու մասին խոսակցություններն ընդունելի են ձեզ համար, ուստի ակտիվ հետևում եք ընթացիկ գործընթացներին և մշտապես հայտնում ձեր դիրքորոշումը սոցիալական ցանցերում:

## ՆՊԱՏԱԿ

Լինել հասարակության ակտիվ անդամ՝ երկրի տնտեսական վիճակի բարելավման համար դիրք ընտրելու և այն ամրապնդելու հարցում:

# ՌԱՈՒԼ ՎԱՍԿԵՍ

Տաքսու վարորդ



**ՏԱՐԻՔ**

55 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

1980
Սննդային անվտանգություն

**ՓՈՐՁ**

Բնական հյութերի գործարանում որակի վերահսկիչ՝ 1980-2000 թվականներ, տաքսու վարորդ՝ 2000 թվականից առայսօր:

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Մեկնել Նումերիա՝ զավակին տեսակցության

**ՓՈՐՁ**

Տարիներ շարունակ աշխատել եք բնական հյութեր արտադրող գործարանում, որից հետո մնացել առանց աշխատանքի և սկսել վարել տաքսի: Սկզբում աշխատանքային մեքենա էիք վարձել, այնուհետև գնեցիք մեքենա՝ ձեր էմիգրանտ որդու (այժմ աշխատում է Սինոյի հարևան՝ Նումերիա երկրում) ուղարկած գումարով և շատ գոհ եք ձեր աշխատանքից:

**ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դուք հետաքրքրված եք քաղաքական իրադարձություններով և ակտիվ հետևում եք ընթացիկ գործընթացներին: Լրատվական թողարկման ժամանակ նույնիսկ, մեքենան կանգնեցնում եք, որպեսզի ոչ մի կարևոր նորություն բաց չթողնեք:

Դուք հույս ունեք, որ երկրի տնտեսական վիճակը կբարելավվի, և ձեր որդին, ում չեք տեսել արդեն 15 տարի, կկարողանա վերադառնալ Սինո: Դուք կասկածներ ունեք երկրի՝ միջազգային կազմակերպությանն անդամակցելու հարցում և  ակտիվ արտահայտում եք ձեր կարծիքը սոցիալական ցանցերում:

**ՆՊԱՏԱԿ**

Ընտրեք երկրի համար տնտեսապես ամենաշահավետ տարբերակը և կոչեք հանրությանն աջակցել այդ որոշմանը:

# ԱԼԵ ԲԱՐԻՍՏ

Ատամնաբույժ



**ՏԱՐԻՔ**

27 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Չամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2017

Բժշկական համալսարան

**ՓՈՐՁ**

Ատամնաբույժի օգնական՝ 2018-2019 թվականներ: Ատամնաբույժ՝ 2020 թվականից առայսօր:

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Սեփական ատամնաբուժական կլինիկայի բացում

**ՓՈՐՁ**

Դուք ատամնաբույժ եք և քաղաքացիական ակտիվիստ: Ձեր ընկերների հետ մասնակցել եք բազմաթիվ համայնքային նախաձեռնությունների: Ժողովրդավարական արժեքները շատ կարևոր են ձեզ համար: Զբաղվածության պատճառով հաճախ չեք կարողանում մասնակցել քաղաքացիական գործընթացների, սակայն փորձում եք ակտիվ լինել սոցիալական ցանցերում և հաստատել ձեր քաղաքացիական դիրքորոշումը՝ երկրում ընթացող գործընթացների վերաբերյալ:

**ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ցանկանում եք, որպեսզի երկիրը տնտեսապես զարգանա և բիզնեսի գործարկման համար կայուն միջավայր ունենա, այլապես չեք կարողանա սեփական ատամնաբուժարանը բացել: Դուք խոստումնալից եք համարում երկրի՝ միջազգային կազմակերպությանն անդամագրվելու փաստը: Ակտիվ հետևում եք լրատվամիջոցներին, որպեսզի իմանաք, թե որ կազմակերպությանն աջակցել:

**ՆՊԱՏԱԿ**

Ընտրել երկրի համար տնտեսապես առավել շահավետ տարբերակ և հորդորել հանրությանն աջակցել այդ որոշմանը:

# ԴԱՆԻԵԼԱ ՎԱՌԻԼ

Տանտնտեսուհի



**ՏԱՐԻՔ**

55 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

1980

Միջնակարգ կրթություն

**ՓՈՐՁ**

Մանկապարտեզի դաստիարակի օգնական՝ 1990-1995 թվականներ

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Թոնրատան բացում

## ՓՈՐՁ

Դուք վաղ տարիքում եք ամուսնացել, ունեք 5 երեխա: Նրանցից երեքը գտնվում են էմիգրացիայում: Երկուսն ապրում են ձեզ հետ: Ձեր ամուսինը մահացել է երեք տարի առաջ: Ձեր եկամուտը ձեր երեխաների ուղարկած գումարն է: Դուք ամբողջ օրը տանն եք, հեռուստացույց եք դիտում և կիսվում ձեր տեսակետներով սոցիալական ցանցերում:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցանկանում եք, որ երկիրն ունենա կայուն տնտեսական միջավայր, որպեսզի ձեր երեխաները կարողանան աշխատել Սինոլում և ստիպված չլինեն մնալ էմիգրացիայում: Երեխաների ուղարկած գումարով խնայողություններ եք անում, ուզում եք սեփական թոնրատունը բացել: Ներկայում ակտիվ հետևում եք երկրում ընթացող գործընթացներին և փորձում կողմնորոշվել, թե ո՞ր կազմակերպությանն աջակցել:

## ՆՊԱՏԱԿ

Ընտրել երկրի համար տնտեսապես առավել շահավետ տարբերակ և հորդորել հանրությանն աջակցել այդ որոշմանը:

# ԷԴԳԱՐ ԱՆԱՐԹՈՍԻՍ

Վաճառական



**ՏԱՐԻՔ**

45 տարեկան

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Ամուսնացած

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

Բարձրագույն կրթություն, ճարտարագիտություն

**ՓՈՐՁ**

Չի աշխատել մասնագիտությամբ

**ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ**

Արտագաղթել

## ՓՈՐՁ

Չնայած նրա, որ ձեր ընտանիքի խիստ պահանջով ավարտել եք բարձրագույն ուսումնական հաստատություն և ունեք ճարտարապետի դիպլոմ, երբեք չեք աշխատել ձեր մասնագիտությամբ: Մի քանի տարի առաջ բացեցիք ձեր սեփական փոքր բիզնեսը: Այդ նպատակով բանկից վարկ վերցրեցիք: Ցավոք, բիզնեսը ձախողվեց և դուք չկարողացաք վճարել պարտքը, որի պատճառով կորցրեցիք ձեր բնակարանը: Այժմ ձեր ընտանիքի հետ ապրում եք վարձակալած բնակարանում և գոյատևում առևտրի շնորհիվ:

## ՊԱՇՏՈՆ/ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք պատրաստվում եք արտագաղթել՝ ձեր տնտեսական վիճակը բարելավելու նպատակով: Ձեր մանկության ընկերները տարիներ շարունակ աշխատում են Սինոյի հարևան երկրում՝ Նումերիայում, և դուք նույնպես մտածում եք այնտեղ մեկնելու մասին: Մինչ այդ ծանոթանում եք երկրում ընթացող գործընթացներին և հույս ունեք երկրի համար Նոր՝ միջազգային կազմակերպությանն անդամակցելու հնարավորության բացմանը, սակայն չեք կողմնորոշվում, թե ո՞ր կազմակերպությանն անդամակցել: Եզրակացություններ անելու համար ակտիվ հետևում եք հեռուստատեսային հեռարձակումներին և սոցիալական ցանցերին: Տեղեկատվություն ստանալուց բացի, փորձում եք ձեր կարծիքն արտահայտել սոցիալական ցանցերում:

## ՆՊԱՏԱԿ

Ցանկանում եք, որպեսզի երկրում ստեղծվի այնպիսի իրավիճակ, որը կնվազեցնի քաղաքացիների զանգվածային արտագաղթը երկրից:

ԲԱԺԻՆ 2

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Սինոլը կղզատիպ պետություն է, որը գտնվում է Խաղաղ օվկիանոսում: Վերջին տարիներին աճող միգրացիայի պատճառով նրա բնակչությունն աստիճանաբար նվազում է: Վերջին մարդահամարի տվյալներով, երկրում ապրում է մոտ 2,5 մլն մարդ: Միգրացիայի հիմնական պատճառը աշխատատեղերի բացակայությունն է և ընդհանուր տնտեսական դժվարությունները: Տնտեսական անկայունությունը հասարակության մեջ տարբեր հիմքերով գոյություն ունեցող պառակտվածություններն է սրում:

Միջազգային քաղաքական ուղղվածության ընտրության հարցում, երկրում անցումային գործընթացներ են տեղի ունենում: Հասարակությունը հիմնավոր դիրքորոշում չունի այս հարցում: Լրատվամիջոցները մեծ ազդեցություն ունեն Սինոլի բնակչության վրա: Երկրում կան մի քանի առաջատար ավանդական լրատվամիջոցներ, որոնք հաճախ լուսաբանում են նույն իրադարձությունը արմատապես տարբեր տեսանկյունից: Բնակչության մեծ մասը հետաքրքրված է նորություններով: Նրանք հիմնականում տեղեկատվություն են ստանում ավանդական լրատվամիջոցներից մեկի միջոցով և իրենց կարծիքը ձևավորում հենց այդ լրատվամիջոցով հեռարձակվող տեղեկատվության հիման վրա:

Բնակչությունը հենց լրատվամիջոցներից է ակնկալում համապատասխան տեղեկատվություն, որն օգնում է վերաբերմունք ձևավորելու հարցում:

Երկրում մեծ տեղ է գրավում նաև անկախ/քաղաքացի լրագրողների մշակույթը: Նրանք հիմնականում ակտիվ են սոցիալական ցանցերում:

### ՍԻՆՈԼ

Ակնարկ՝ երկրի մասին



**Տարածքը՝**

**35 846 կմ$^2$**

**Բնակչությունը՝**

**2 557 600**





**Տնտեսական վիճակը՝**
զարգացող էկոնոմիկա: Ընդհանուր ներքին ապրանք՝ մեկ բնակչի դիմաց՝
**2, 021 ԱՄՆ դոլար**

**Աշխարհագրությունը՝**

Կղզային պետություն. տեղակայված է Խաղաղ օվկիանոսի արևմտյան հատվածում





**Պատմությունը՝**

Հարուստ պատմություն ունեցող երկիր: Հայտնի է մշակութային ժառանգության հուշարձաններով:

## ՍԻՆՈԼՈՒՄ ԶԱՐԳԱՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սինոլը գտնվում է պատմական խաչմերուկում: Այն ունի միջազգային կազմակերպության անդամ դառնալու հնարավորություն, ինչն ապագայում պետք է դրական ազդեցություն ունենա նրա տնտեսական վիճակի վրա: Ներկայում քննարկվում է, թե պետությունը ո՞ր միջազգային միությանը պետք է անդամակցի: Մի կողմից կարող է անդամագրվել **«Մեծ դաշինք»** միջազգային կազմակերպությանը, մյուս կողմից՝ միանալ **«Ուժեղ միություն»** միջազգային կազմակերպությանը: Ամեն ինչ կարծես թե պարզ է, սակայն այն, որ «Մեծ դաշինքն» ու «Ուժեղ միությունը» ունեն տարբեր նպատակներ ու գաղափարախոսություններ, հակասություններ է առաջացնում հասարակության շրջանում: Բնակիչները լիարժեք տեղեկատվություն չունեն, թե ի՞նչ է իրենից ներկայացնում յուրաքանչյուր միություն և ի՞նչ են պահանջում Սինոլից: Վերջին շրջանում այս թեմայով բազմաթիվ շահարկումներ ու ապատեղեկատվություն է տարածվում, ինչը դժվարացնում է հասարակության կոնսոլիդացումը: Երկու կազմակերպություններն էլ Սինոլում ունեն իրենց ազդեցիկ աջակիցները: Տարբեր շահագրգիռ խմբեր փորձում են համագործակցել հեռուստաընկերությունների ներկայացուցիչների հետ, որպեսզի ԶԼՄ-ների օգնությամբ հանրությանը համոզեն իրենց նախընտրած միավորման գերազանցության մեջ:



## ՀԱՂԹԱՀԱՐՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

Սինոլի կառավարությունը չի կարող միանձնյա որոշել, թե ո՞ր միությանն անդամակցի, ուստի նախագահը պլեբիսցիտ է հրավիրում՝ որոշելու բնակչության դիրքորոշումը: Քաղաքացիների մեծամասնությունը լրատվամիջոցներից ակնկալում է տեղեկատվություն, որի հիման վրա կկատարի իր ընտրությունը: Սինոլը պետք է ընտրի կազմակերպություններից մեկը, ինչն այս դեպքում նշանակում է ընտրել երկրի քաղաքական ուղղվածությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ „3”

# ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ



**ԴՈՆԱ ՍՏՐՈՈՒՊ**

«Իսկական» հեռուստաընկերության խմբագիր



**ՆԵՅԼ ՏՐԱՆ**

«Իսկական» հեռուստաընկերության լրագրող



**ԴՐՅՈՒ ՓԵՅԳ**

«Իսկական» հեռուստաընկերության օպերատոր/մոնտաժող



**ԴԵՎԻԴ ԲՈՐԱՆ**

«Լուսին» հեռուստաընկերության խմբագիր



**ՄԱՐԻԱՆՆԱ ԱՆԴԵՐՍՈՆ**

«Լուսին» հեռուստաընկերության լրագրող/հաղորդավարուհի



**ԼԱՐՍ ՊԵՏԵՐՍ**

«Լուսին» հեռուստաընկերության օպերատոր/ մոնտաժող



**ՍԻԱ ՌՈԴՐԻԳՈՒ**

«Մեծ դաշինք» կազմակերպության ներկայացուցիչ



**ՍԱՇԱ ԴԵԲՈՅՍ**

«Միասին» ընդդիմադիր կուսակցության անդամ



**ՋԻԴԻ ԷՋԻ**

բիզնես ընկերության սեփականատեր



**ԴԵՆԻ ՄԱՐՏԻՆԵԶ**

«Ուժեղ միություն» կազմակերպության ներկայացուցիչ



**ՇԵՐՈՆ ԳԱՐՍԻԱ**

էկոնոմիկայի նախարար



**ՌԵՅՁ ՄԻԼԵՐ**

բիզնեսմեն



**ՎԱՐԿԱ ԴԱՐԻԱ**

«Հանուն ժողովրդավարության» NGO ներկայացուցիչ



**ԴԱՆԱ ՎԵՐԴՈՒՍԿԻ**

«Պաշպանենք այն, ինչ մերն է» NGO ներկայացուցիչ



**ԱԱՐՈՆ ԼՈԵՆ**

քաղաքացի լրագրող



**ՀԵՐՄԱՆԱ ՆԱՊՈԼԻՏԱՆ**

քաղաքացի լրագրող



**ԿԵՏՈՒՏ ՍՈՒՍՈՒԼԻՈ**

նախագահ



**ԷԴՄՈՒՆԴ ԴԵՅԼ**

ուսանող



**ԱՆԺԵԼ ԴՈՆ**

պատմաբան



**ՔԵՅԹ ՎԵՆՍԴԵՅ**

ուսուցչուհի



**ՌԱՈՒԼ ՎԱՍԿԵՍ**

տաքսու վարորդ



**ԱԼԵ ԲԱՐԻՍՏ**

ատամնաբույժ



**ԴԱՆԻԵԼԱ ՎԱՈՒԼ**

տանտնտեսուհի



**ԷԴԳԱՐ ԱՆԱՐԹՈՍԻՍ**

առևտրական

ՀԱՎԵԼՎԱԾ 4

# ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

## ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Սիմուլյացիան գործարկելու համար անհրաժեշտ են արտաքին և ներքին կանոններ: Արտաքին կանոնները հիմնականում վերաբերում են նախապատրաստական գործընթացին, իսկ ներքին կանոններն ուղղակիորեն առնչվում՝ խաղի ընթացքին: Օրինակ՝ «Սինոլ» սիմուլյացիոն խաղում պլեբիսցիտի անցկացման կանոնները ներկայացված են այլ և պարզեցված տեսքով: Ի տարբերություն իրական կյանքի, խաղի պլեբիսցիտը վարում է նախագահը, իսկ քաղաքացի լրագրողները/ակտիվիստները օգնում են հաշվել ձայները և հետևել քվեարկության ընթացքին:

Արտաքին կանոններ. Խաղի մասնակիցները հարգում են միմյանց, հրելն ու վիրավորելն՝ արգելված են: Հնարավոր չէ դադարեցնել խաղը և փոխանակել դերերը: Դերը կարող է փոխվել միայն ֆասիլիտատորի թույլտվությամբ՝բացառիկ դեպքերում: Մասնակիցը պետք է խաղա իր պրոֆիլում առկա տեղեկատվության հիման վրա, նրա գործողությունները պետք է համապատասխանեն կերպարի նպատակներին և բնավորությանը:

Խաղը սկսվում է խորհրդանշական գիծը հատելով, որից հետո մասնակիցը ստանձնում է իր դերը: Խաղի դադարեցումը և դերից դուրս գալը նույնպես կատարվում է գիծը հատելու միջոցով:

Ներքին կանոններ. Ասուլիսում լրագրողների հղած հարցերի և իրենց պրոֆիլներում առկա տեղեկատվության հիման վրա, մասնակիցները որոշում են, թե որ լրատվամիջոցը դիտեն խաղի ընթացքում:

Ասուլիսից հետո, իմիտացված սոցիալական ցանցում մասնակիցները քաղաքացի լրագրողների կողմից անցկացված հարցման ընթացքում արձանագրում են իրենց նախնական վերաբերմունքը՝ Սինոլի միջազգային կազմակերպություններին անդամակցելու վերաբերյալ: Քաղաքացիները կարող են փոխել պլեբիսցիտին հաջորդած ասուլիսին իրենց ֆիքսված վերաբերմունքը:

Ամբողջ խաղի ընթացքում մասնակիցներն ակտիվ արտահայտում են իրենց կարծիքը իմիտացված սոցիալական ցանցում:

Պլեբիսցիտին կարող են քվեարկել Սինոլի բոլոր չափահաս քաղաքացիները: Պլեբիսցիտի արդյունքները հաշվում են նախագահն ու քաղաքացի լրագրողները:

Պլեբիսցիտի արդյունքները հայտարարվում են քաղաքացի լրագրողների կողմից կազմակերպված հաղորդումների մեջ:

## ՀԱՎԵԼՎԱԾ 5

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Չնայած տնտեսական խնդիրներին՝ Սինոլի պետությունը տարիներ շարունակ աշխատել է ժողովրդավարական բարեփոխումների ուղղությամբ, որոնց շնորհիվ միջազգային ասպարեզում ձեռք է բերել զարգացող ժողովրդավարական երկրի կարգավիճակ: Արդյունքում, Սինոլն ունի խոշորագույն միջազգային միության՝ «Մեծ դաշինքի» անդամ դառնալու հեռանկար: Նոր հեռանկարի ի հայտ գալուն զուգընթաց, նոր հետաքրքրություն է նկատվում նաև երկրորդ խոշոր միջազգային միության՝ «Ուժեղ միության» կողմից, որը ցանկանում է մուտք ապահովել դեպի Սինոլի ռազմավարական նավահանգիստ:




«Մեծ դաշինքն» ու «Ուժեղ միությունը» հակադիր նպատակներ ու գաղափարախոսություններ ունեն, ուստի Սինոլը պետք է ընտրի, թե որի հետ դաշնակցի: Երկու միություններն էլ խոստանում են լուծել Սինոլի հիմնական խնդիրը՝ գործազրկությունն ու փլուզված տնտեսությունը: Տարբերությունն այն է, որ **«Մեծ դաշինքը»**, որը ստեղծվել է 1972 թվականին և այսօր ներառում է 21 դեմոկրատական պետություն, ժողովրդավարության և փոխադարձ համագործակցության վրա հիմնված միություն է և անվտանգության ու կայուն զարգացման ավելի շատ երաշխիքներ է տալիս: Միաժամանակ այն Սինոլից պահանջում է մարդու իրավունքների պաշտպանություն, պետական ինստիտուտների ամրապնդում, օրենսդրության բարելավում և, առհասարակ, ժողովրդավարության որակի բարձրացում, ինչը կապված է երկարաժամկետ հեռանկարների հետ և բացառում է արագ ստացված արդյունքը:

**«Ուժեղ միությունը»**, որը ստեղծվել է 1998 թվականին և ներկայում միավորում է 11 պետություն, պատրաստ է հենց վաղն ընդունել Սինոլն իր շարքերում, բացել առևտրային ուղիներ և վերացնել առևտրային խոչընդոտները, ինչը հնարավորիս արագ կազդի երկրի տնտեսական վիճակի բարելավման վրա: Սակայն. ոչ թե փոխադարձ համագործակցության, այլ հիերարխիայի սկզբունքի հաշվառումով, ինչը ենթադրում է Սինոլի կողմից որոշակի ռազմավարական օբյեկտների (օրինակ՝ նավահանգստի) վերահսկողությունից հրաժարում: Չարկ է նշել այս միության բարձրաստիճան պաշտոնյաների կոռուպցիոն շահերը, քանի որ Սինոլն ունի բարենպաստ աշխարհագրական դիրք և հեռանկարային է թվում մի շարք կոռուպցիոն ծրագրերի իրականացման համար: Քանի որ մենք գործ ունենք էլիտար կոռուպցիայի հետ, դրա բացահայտումը ապացուցման մակարդակով կապված է մեծ մարտահրավերների հետ: Այս ասոցիացիան քիչ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքներին և ընդհանրապես ժողովրդավարական արժեքներին:

**Ծանոթագրություն ուսուցչի համար.** հասարակական կազմակերպությունների մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի լրագրողներին, միջազգային կազմակերպություններին, բիզնեսի ներկայացուցիչներին և քաղաքական գործիչներին: Այս տեղեկատվությունը չի տրամադրվում այն քաղաքացիներին, որոնք պետք է լրատվություն ստանան միայն լրատվամիջոցներից և պլեբիսցիտի վերաբերյալ իրենց ընտրությունը կատարեն հենց այդ տեղեկատվության հիման վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ 6

# ՊԼԵԲԻՍՑԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

## ՊԼԵԲԻՍՑԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Քանի որ սիմուլյացիայի հիմնական ուշադրությունը կենտրոնացած է լրատվամիջոցների վրա, խաղի ընթացքում ընթացակարգերին ավելի քիչ ուշադրություն է դարձվում, թեև նվազագույն չափանիշը պետք է պահպանվի: Պլեբիսցիտի անցկացման համար անհրաժեշտ կլինեն քվեաթերթիկներ, որոնց վրա մասնակիցները կարձանագրեն իրենց կարծիքը, ինչպես նաև արկղ, որտեղ կտեղադրեն իրենց ձայները:

Բոլորին հայտնի է, որ իրական իրավիճակում պլեբիսցիտն անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ներառում է մի շարք ընթացակարգեր: Իսկ ներկայացված սիմուլյացիոն խաղում իրավիճակը պարզեցնելու նպատակով, պլեբիսցիտն անցկացվում է նախագահի կողմից, որի կազմակերպմանն օգնում են քաղաքացի լրագրողները/ակտիվիստները: Քվեարկության և հաշվման գործընթացներին մասնակցում են կամավոր դիտորդներ: Պլեբիսցիտի արդյունքները հաշվում են նախագահը և քաղաքացի լրագրողները:

## ՀԱՎԵԼՎԱԾ 7

# ՊԼԵԲԻՍՑԻՏԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

## ՍԻՆՈԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԵԲԻՍՑԻՏ

**Պլեբիսցիտի քվեաթերթիկ**

Ո՞ր միջազգային կազմակերպությանն անդամակցի Սինոլը

1. Մեծ դաշինք
2. Ուժեղ միություն

Ընդգծեք նախընտրելի կազմակերպությունը


## ՍԻՆՈԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԵԲԻՍՑԻՏ

**Պլեբիսցիտի քվեաթերթիկ**

Ո՞ր միջազգային կազմակերպությանն անդամակցի Սինոլը

1. Մեծ դաշինք
2. Ուժեղ միություն

Ընդգծեք նախընտրելի կազմակերպությունը

## ՍԻՆՈԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԵԲԻՍՑԻՏ

**Պլեբիսցիտի քվեաթերթիկ**

Ո՞ր միջազգային կազմակերպությանն անդամակցի Սինոլը

1. Մեծ դաշինք
2. Ուժեղ միություն

Ընդգծեք նախընտրելի կազմակերպությունը

## ՍԻՆՈԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԵԲԻՍՑԻՏ

**Պլեբիսցիտի քվեաթերթիկ**

Ո՞ր միջազգային կազմակերպությանն անդամակցի Սինոլը

1. Մեծ դաշինք
2. Ուժեղ միություն

Ընդգծեք նախընտրելի կազմակերպությունը

ՀԱՎԵԼՎԱԾ 8

# ՄՈԴԵԼԱՎՈՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑ








## ՍԻՆՈԼԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Հարցաշարը նպատակ ունի բացահայտել հանրության վերաբերմունքը Սինոլի միջազգային կազմակերպության մեջ անդամակցության վերաբերյալ: Հարցարանն անանուն է:

Այցելեք Google՝ ձեր առաջընթացը տեսնելու համար: Տեղեկացեք ավելիին.

*պարտադիր

Ո՞ր կազմակերպությանն եք ցանկանում անդամագրվի Սինոլը

- ◯ Մեծ դաշինք
- ◯ MGB միություն
- ◯ Չգիտեմ

Ուղարկել

Ջնջել

ՀԱՎԵԼՎԱԾ

# 9

# ԲԵՅՋԵՐ/ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՔԱՐՏԵՐ

## ԴՈՆԱ ՍՏՐՈՈՒՊ

«Իսկական» հեռուստաընկերության խմբագիր



## ՆԵՅԼ ՏՐԱՆ

«Իսկական» հեռուստաընկերության լրագրող



## ԴՐՅՈՒ ՓԵՅԳ

«Իսկական» հեռուստաընկերության օպերատոր/մոնտաժող



## ԴԵՎԻԴ ԲՈՐԱՆ

«Լուսին» հեռուստաընկերության խմբագիր



## ՄԱՐԻԱՆՆԱ ԱՆԴԵՐՍՈՆ

«Լուսին» հեռուստաընկերության լրագրող/հաղորդավարուհի



## ԼԱՐՍ ՊԵՏԵՐՍ

«Լուսին» հեռուստաընկերության օպերատոր/ մոնտաժող



## ՀԵՐՄԱՆԱ ՆԱՊՈԼԻՏԱՆ

քաղաքացի լրագրող



## ԱԱՐՈՆ ԼՈԵՆ

քաղաքացի լրագրող



## ՍԻԱ ՌՈԴՐԻԳՈՒ

«Մեծ դաշինք» կազմակերպության ներկայացուցիչ



## ԴԵՆԻ ՄԱՐՏԻՆԵԶ

«Ուժեղ միություն» կազմակերպության ներկայացուցիչ



## ՍԱՇԱ ԴԵԲՈՅՍ

«Միասին» ընդդիմադիր կուսակցության անդամ



## ՉԻԴԻ ԷՋԻ

բիզնես ընկերության սեփականատեր



## ՌԵՅՉ ՄԻԼԵՐ

բիզնեսմեն



## ՎԱՐԿԱ ԴԱՐԻԱ

«Հանուն ժողովրդավարության» NGO ներկայացուցիչ



## ԴԱՆԱ ՎԵՐԴՈՒՍԿԻ

«Պաշպանենք այն, ինչ մերն է» NGO ներկայացուցիչ



## ՇԵՐՈՆ ԳԱՐՍԻԱ

էկոնոմիկայի նախարար



## ԿԵՏՈՒՏ ՍՈՒՍՈՒԼԻՈ

նախագահ



## ԷԴՄՈՒՆԴ ԴԵՅԼ

ուսանող



## ԱՆԺԵԼ ԴՈՆ

պատմաբան



## ՔԵՅԹ ՎԵՆՍԴԵՅ

ուսուցչուհի



## ՌԱՈՒԼ ՎԱՍԿԵՍ

տաքսու վարորդ



## ԱԼԵ ԲԱՐԻՍՏ

ատամնաբույժ



## ԴԱՆԻԵԼԱ ՎԱՈՒԼ

տանտնտեսուհի



## ԷԴԳԱՐ ԱՆԱՐԹՈՍԻՍ

առևտրական



Սիմուլյացիոն խաղը պատրաստվել է USAID – ի Քաղաքացիական
կրթության ծրագրի շրջանակներում
2023